



Կորպորատիվ սոցիալական  
պատասխանատվության ոլորտում  
Հայաստանի Հանրապետության կառավարության  
քաղաքականության վերաբերյալ  
հայեցակարգային փաստաթուղթ

Մշակվել է ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի  
ՄԱԿ-ի Գլոբալ Պայմանագիր ծրագրի  
շրջանակներում

## Բովանդակություն

Ներածություն.....	2
Ի՞նչ է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը.....	2
ԿՄՊ ոլորտում կառավարության ավելի լայն ներգրավման հիմնավորում.....	9
ԿՄՊ ոլորտում կառավարության ներգրավման տիպային մոդելներ .....	11
Այլ երկրներում կառավարությունների կողմից կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խթանման փորձը.....	16
Միացյալ Թագավորություն .....	17
Իտալիա.....	19
Իսպանիա .....	20
Լիտվա .....	21
Կառավարության դերը ԿՄՊ-ի առաջխաղացման գործում.....	23
Կառուցվածքային հարցեր.....	23
Գործողությունների նախնական ծրագիր.....	23
Հավելված 1. 26 երկրներում կառավարության ներգրավվածության եւ ԿՄՊ իրավիճակի ամփոփագիր .....	28
Հավելված 2. ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի 10 սկզբունքները .....	35

## Ներածություն

### *Ի՞նչ է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը*

Եվրոպական հանձնաժողովը կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) սահմանում է հետևյալ կերպ. «մի հայեցակարգ, ըստ որի, ընկերությունները սոցիալական եւ բնապահպանական մտահոգությունները կամավորության հիմքով ներգծում են իրենց ձեռնարկատիրական գործունեության մեջ եւ շահագրգիռ կողմերի հետ իրենց փոխհարաբերություններում»<sup>1</sup>:

Այսպիսով, ԿՍՊ-ն հստակորեն ճանաչվել է որպես կամավորության վրա հիմնված մոտեցում ձեռնարկատիրությանը եւ դիտարկվում է որպես ավելին, քան պարզապես օրենքներին եւ կանոններին ենթարկվելն է: Միեւնույն ժամանակ՝ ԿՍՊ-ն հարաճուն կերպով շաղկապվում է ավելի բարձր շահութաբերության եւ մրցունակության, ինչպես նաեւ ընկերության վարկի եւ հեղինակության ամրապնդման հետ: Ընդգծման արժանի կարեւոր հանգամանք է այն, որ ԿՍՊ-ն չպիտի համարվի մի «հավելում» հիմնական ձեռնարկատիրական գործունեությանը, այլ ենթադրվում է, որ այն սերտորեն ներգծված է բիզնես ռազմավարությանը եւ կառավարմանը: Կարեւոր է նաեւ նշել, որ ԿՍՊ-ն ենթադրում է փոխհարաբերություններ շահագրգիռ կողմերի մի ընդարձակ շրջանակի հետ, որը սահմանափակված չի լինի սուսկ ընկերության շահագրգիռ կողմերով, դեկլարներով կամ աշխատակազմով, այլ կներառի նաեւ համայնքը, կենտրոնական կառավարությունը, տեղական իշխանությունները, քաղաքացիական հասարակությունը, հաճախորդներին կամ նույնիսկ մրցակիցներին:<sup>2</sup>

Որպեսզի որեւէ ընկերություն պլանավորի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ներգծումը սեփական գործունեության մեջ, այն պետք է ուսումնասիրի արժեքի ստեղծման սեփական շղթան եւ պարզի այն ուղիները, որոնց միջոցով ընկերությունն ազդում է շրջակա միջավայրի (ոչ միայն բնական շրջակայքի, այլ նաեւ հասարակության եւ երկրի տնտեսության) վրա, ինչպես նաեւ այն ուղիները, որոնց միջոցով այդ շրջակա միջավայրն ազդում է ընկերության վրա: Մի օրինակ, թե ինչպես է շրջակա միջավայրն ազդում ընկերության վրա, կարող է լինել կրթությունը: Եթե որեւէ ընկերություն գտնում է, որ աշխատուժի ընտրությունը սահմանափակ է, քանի որ տվյալ երկրում կրթական համակարգը չի պատրաստում հնարավոր հմուտ աշխատակիցներ, որպես իր ԿՍՊ ռազմավարության մի մաս, այն կարող է ներդրումներ կատարել այս ոլորտում եւ աշխատել կառավարության հետ համատեղ՝ մշակելու համար այնպիսի կրթական ծրագրեր, որոնց օգնությամբ կպատրաստվեն այնպիսի աշխատողներ, ում կարիքն ունի տվյալ ընկերությունը:

<sup>1</sup> Եվրոպական հանձնաժողովի գրություն/09/109 [European Commission Memo/09/109, Brussels 2009], Բրյուսել, 2009 թվական

<sup>2</sup> Եվրոպական համայնքների հանձնաժողով [Commission of the European Communities], «Հաղորդում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վերաբերյալ. Գործարար հատվածի նպաստը կայուն զարգացմանը» [Communication Concerning Corporate Social Responsibility: A Business Contribution To Sustainable Development], 2002 թվական:

ԿՄՊ-ն իրագործվում է՝ ելնելով տվյալ ընկերության *բիզնես* շահերից, այլ ոչ թե գուտ բարեգործության նկատառումներից: Սա կարելու է, քանի որ եթե որեւէ ընկերություն ԿՄՊ գործողությունների համար գումարներ է ծախսում գուտ բարեգործական նկատառումներից ելնելով, այս գործողությունները կդադարեն, հենց որ առաջանան ֆինանսական դժվարություններ, եւ ընկերությունը ստիպված լինի ֆինանսական կրճատումներ կատարելու: Որպեսզի ԿՄՊ-ն լինի հարակալուն եւ հաստատուն կերպով տրամադրի օգուտներ հասարակությանը, այն պետք է բխի ընկերության գործարար շահերից:

Գոյություն ունեն չորս հիմնական պատճառներ, թե ինչու են ընկերությունները որդեգրում կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն<sup>3</sup>.

- *Հարակալունություն.* Աշխարհում, որտեղ ռեսուրսները սահմանափակ են, շատ ընկերություններ երկարաժամկետ տեսակետից են դիտարկում սեփական գործունեությունը եւ գիտակցում են, որ նրանց անհրաժեշտ է գործել այսօր, որպեսզի հավաստիանան, որ կարող են շարունակել գոյություն ունենալ մի քանի տասնամյակ անց: Հարակալունության խնդիրները կարող են տարբեր լինել եւ կախված են տվյալ ընկերության գործունեությունից: Անհրաժեշտ է, որ տնտեսության աշխատատար ճյուղերը հաշվի առնեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխատողների առողջապահական կրթությունը եւ կոնֆլիկտների կանխարգելումը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածվածության բարձր մակարդակ ունեցող եւ հակամարտություններում ներգրավված երկրներում առողջ երիտասարդ տղամարդկանց եւ կանանց պակասը նշանակում է ավելի ցածր արտադրողականություն: Այսպիսով, ընկերության գործարար շահերից է բխում այս խնդիրներին լուծումներ տալու գործում ներդրումներ կատարելը:
- *Գործելու արտոնագիր.* Սա արտոնագիր չէ բառի իրավական իմաստով, այլ ավելի շուտ հավանություն այն համայնքի կողմից, որտեղ գործում է տվյալ ընկերությունը: Գուցե սրա լավագույն օրինակը հանքարդյունաբերության ոլորտում է, որտեղ համայնքները հաճախ կասկածանքով են նայում ընկերություններին, որոնք ժամանել են՝ այդ համայնքների տարածաշրջաններում գտնվող հանքերը շահագործելու նպատակով: Հաճախ ընկերությունները մեծ ներդրումներ են կատարում այս համայնքներում եւ կառուցում են դպրոցներ, հիվանդանոցներ, մշակութային հաստատություններ եւ այլ ենթակառուցվածքներ: Այդ ընկերությունները ներգրավվում են համայնքային միջոցառումներին եւ իրենց շրջակայքում բնակվող ժողովրդին ցույց տալիս, որ ընկերության հաջողությունը կհանգեցնի համայնքի հաջողությանը: Սա հանգեցնում է ընկերության ներկայության հավանությանը համայնքի կողմից եւ ցանկությանը, որ ընկերությունը հաջողություն ունենա:
- *Հեղինակություն.* Գուցե սա ԿՄՊ-ում ներգրավվելու պատճառներից ամենապակաս ռազմավարականն է. այն հիմնականում կենտրոնանում է հանրային հարաբերությունների եւ սպառողների շրջանում ընկերության ընկալման շուրջ: Ընկերությունները գիտակցում են, որ երբ իրենց ապրանքը մրցակիցների

<sup>3</sup> Մայքլ Է. Պորտեր եւ Մարկ Ռ. Կրամեր [Michael E. Porter and Mark R. Kramer], «Ռազմավարություն եւ հասարակություն. Մրցակցային առավելության եւ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության միջեւ կապը» [Strategy and Society: The Link Between Competitive Advantage and Corporate Social Responsibility], Harvard Business Review, դեկտեմբեր, 2006 թվական:

ապրանքներից տարբերակող շատ բան չկա, իրենց հեղինակությունը կարող է դառնալ այն լրացուցիչ գործոնը, որը հաճախորդներին կստիպի ընտրել իրենց ընկերությունը:

- *Բարոյական պարտավորություն.* Անհրաժեշտ է, որ ընկերությունները երաշխավորեն, որ իրենց ձեռնարկատիրական գործունեությունը չի վնասում շահագրգիռ կողմերին, այլապես հետագա փուլերում այն կարող է լուրջ հետևանքներ ունենալ: Սպառողները, փայտերերը եւ այլ շահագրգիռ կողմերը բոլորն էլ ավելի ու ավելի շատ են ներգրավվում շուկայում գործող ընկերությունների հետ հարաբերություններում, իսկ այսօրվա տեղեկատվական դարում հեշտ է պարզելը, թե ինչ աղբյուրներից են ընկերությունները վերցնում իրենց հումքը, ինչպես են վերաբերվում իրենց աշխատողներին, ինչպես նաև՝ մանրամասներ էթիկական այլ հարցերի վերաբերյալ: Ընկերության շահերից է բխում՝ մնալ բարոյականության բարձր մակարդակի վրա, որպեսզի հնարավոր լինի ձեւավորել պարկեշտ կորպորատիվ քաղաքացու իմիջ եւ կառավարել ռիսկերն այս ոլորտում:

Բոլոր դեպքերում, մի բան հստակ է. ԿՄՊ-ն ընկերություններին եւ հասարակությանը բերում է երկկողմանի օգուտներ: Այն ուղղված է երկարաժամկետ լուծումների, այլ ոչ թե ընկերության համար արագ հասույթներ ապահովելուն:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը որեւէ երկրի՝ որպես ամբողջության, կայուն զարգացման էական բաղադրիչ է: Մասնավոր հատվածը տնտեսական զարգացման շարժիչ ուժն է, եւ ԿՄՊ ուժեղ ռազմավարությունը հարակայուն բիզնեսի հումանիշն է: Գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնք հնարավոր է լուծել կառավարության, մասնավոր հատվածի եւ շահույթ չհետապնդող հատվածի համատեղ ջանքերով, ինչը կհանգեցնի փոխադարձ օգուտների՝ բոլոր ներգրավված կողմերի, ինչպես նաև ողջ հասարակության համար: Ստորեւ ներկայացվող ոլորտները օրինակներ են, թե ինչպես հասարակության, կառավարության եւ մասնավոր հատվածի կարիքները կարող են համընկնել: Այս բոլոր դեպքերում բարձր մակարդակ պահպանելը կամ անհրաժեշտության դեպքում բարելավումներ կատարելը բխում է ընկերությունների, հասարակության եւ կառավարության շահերից, եւ հետեւաբար՝ սրանք այն ոլորտներն են, որտեղ հնարավոր է, որ բոլորը կողմերը ներդրումներ կատարեն:

- **Կրթություն** – Գուցե որոշ ձեռնարկություններ որոշակի հմտություններով օժտված կամ ընդհանուր կարգի հմտությունների ավելի բարձր որակ ունեցող աշխատուժի բազայի կարիք ունենան: Աշխատուժի այս բազան նաև ծառայում է կառավարական հաստատություններին, եւ նախարարություններին ու պետական այլ կառույցների նաև թույլ է տալիս բարելավել սեփական աշխատակազմերի որակը: Ավելի բանիմաց աշխատողները նաև ավելի ակտիվ քաղքացիներ են, որոնք ավելի մեծ քաղաքացիական գիտակցություն ունեն: Տնտեսական զարգացման պայմաններում ավելի շատ հմտություններ ձեռք բերելու ունակությունը կապվում է ներգրավված անհատների համար ավելի բարձր աշխատավարձերի եւ ավելի լավ կենսապայմանների հետ:
- **Առողջապահություն** – Ինչպես նշվեց ավելի վաղ, տնտեսության աշխատատար ճյուղերում զբաղված ընկերությունները շահագրգռված են երիտասարդ եւ առողջ աշխատողների բազա ունենալու հարցում: Այս տեսակի բնակչությունը

օգտակար է ողջ տնտեսության համար: Երիտասարդ եւ առողջ, աշխատող անդամներ ունեցող ընտանիքները ֆինանսապես անկախ են եւ կախված չեն սոցիալական ապահովությունից կամ պետական այլ նպաստներից:

- **Շրջակա միջավայրի պաշտպանություն** – Բազմաթիվ ոլորտներում աշխատող ձեռնարկություններ կախված են բնական ռեսուրսներից, ինչպիսիք են ջուրը, փայտը, վառելիքը եւ այլն: Այս ռեսուրսներից որեւէ մեկի սակավությունը կապվում է դրանք ձեռքբերելու նպատակով ավելի մեծ ծախսերի եւ շահույթի փոքր մարժայի հետ: Այս ռեսուրսները կենսական նշանակություն ունեն նաեւ տվյալ երկրի տնտեսության աշխատանքի տեսանկյունից՝ այս ընկերությունների միջոցով, ինչպես նաեւ այլ ոլորտներում, ինչպիսին է զբոսաշրջությունը (տուրիզմը): Աղտոտվածության վերահսկումը եւ բնական գեղեցկության պահպանումը էական նշանակություն ունեն հասարակության համար, որպեսզի վերջինս ունենա կենսապայմանների առողջ ստանդարտ եւ ստանա էսթետիկական հաճույք:
- **Մարդու իրավունքներ** – Մարդու իրավունքների պաշտպանության եւ գործատու-աշխատող հարաբերությունների բարձր չափանիշները ընկերությունների համար հեղինակության հարց են եւ կարելու են աշխատողի բավարարվածության եւ արտադրողականության տեսակետից: Կառավարությունները նաեւ շահագրգիռ են մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում դրական վարկանիշ պահպանելու հարցում՝ բարոյականության եւ հեղինակության նկատառումներից ելնելով, ինչպես նաեւ՝ ավելի շատ օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու առումով:

Այս օրինակները նկարագրում են այն ընդարձակ ընդհանուր հիմքը, որի շուրջ կառավարությունները, ձեռնարկությունները եւ հասարակությունները կարող են համատեղ աշխատել: ԿՄՊ-ի առաջնորդումը հսկայական կարեւորություն ունի այս ոլորտների վրա ազդեցություն ունենալու տեսակետից, քանի որ գործարար հատվածը պարտավոր է ներգրավվել բոլոր այս ոլորտներում, որպեսզի հնարավոր լինի հասնել հարակայուն զարգացման:

Միջազգային հանրությունը երկրում ԿՄՊ իրավիճակի բարելավման առումով նույնպես կարելու շահագրգիռ կողմ է: Այնպիսի միջազգային կառույցներ, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը, Կայուն զարգացման հարցերով համաշխարհային գործարար խորհուրդը եւ Ստանդարտիզացման միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ [ISO]) սահմանում են ուղենիշեր եւ ստեղծում են վարքականոններ, որոնք օգնում են ընկերություններին եւ կառավարություններին՝ առաջ մղել կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը:

Ստանդարտիզացման միջազգային կազմակերպությունը 1996 թվականին ազդարարեց ISO 14000 շարքի մեկնարկը, իսկ 2004 թվականին՝ թարմացված ISO 14001 շարքը: Սա շրջակա միջավայրի կառավարման համակարգ է, որը ներկայում օգտագործվում է կազմակերպությունների եւ ընկերությունների կողմից, ավելի քան 155 երկրներում, եւ բացի դրական բնապահպանական ազդեցությունը, այս ստանդարտը ապահովում է շոշափելի տնտեսական օգուտներ հետեւյալ ոլորտներում.

- հումքի օգտագործման ծավալների կրճատում.
- էներգաարդյունավետություն.

- գործընթացների արդյունավետության բարձրացում.
- թափոնների ծավալների եւ դրանց հեռացման ծախսերի կրճատում.
- վերականգնվող ռեսուրսների օգտագործում<sup>4</sup>

ՄՄԿ-ն այժմ մշակում է ստանդարտների ISO 26000 շարքը, որը պետք է հրապարակվի 2010 թվականին եւ վերաբերելու է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խնդիրներին, ներառյալ ստանդարտ սահմանումների որդեգրումը, ԿՄՊ հայեցակարգերը կյանքի կոչելուն ուղղված գործնական քայլերը, ԿՄՊ վերաբերյալ հաշվետվություններ պատրաստելու չափանիշները, եւ այլն:

---

<sup>4</sup> Ստանդարտիզացման միջազգային կազմակերպություն [International Organization for Standardization], «Շրջակա միջավայրի կառավարում. Միջազգային ստանդարտների ISO 14000 խումբը» [Environmental Management: The ISO 14000 Family of International Standards], Ժնև, Շվեյցարիա, 2009 թվական:

### ***Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը Հայաստանում***

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն հասկացությունը Հայաստանում դեռևս գտնվում է շատ վաղ շրջանում, եւ հիմնականում բազմերկրյա ընկերություններն են, որ ինչ-որ գաղափար ունեն այն մասին, թե ինչ է ԿՍՊ-ն, եւ ինչու է այն կարևոր: Ի հավելումն, գոյություն ունի զգալի շփոթություն ռազմավարական ԿՍՊ-ի եւ կորպորատիվ բարեգործության միջեւ: Այն դեպքում, երբ որոշ հայաստանցի գործարարներ բարեգործական տեսակետից բավականին ակտիվ են, սա հաճախ վերագրվում է տվյալ անհատին, եւ գոյություն չունի այս գործունեության ինտեգրում հիմնարար բիզնեսի մոդելի հետ:

Այն դեպքերում, երբ ընկերությունները բարեգործական տեսակետից ակտիվ են, նրանց կողմից արված ցանկացած նվիրատվություն՝ լինի կանխիկ կամ նյութական տեսքով, ենթակա է հարկման, ինչպես պահանջում է օրենքը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը բազում անգամներ արտահայտել է իր դիրքորոշումը՝ կապված այս ոլորտում հարկային քաղաքականության հետ. մոտակա ժամանակներում որևէ փոփոխություն օրակարգում դրված չէ:

Հայաստանի օրենսդրությունը նաեւ պաշտպանում է բնական միջավայրերը եւ ձեռնարկություններին պատասխանատվության է ենթարկում շրջակայքի վրա դրանց ունեցած բացասական ազդեցությունների համար: Մինչ այս օրենքը լավն է թղթի վրա եւ հիմնված է խելամիտ քաղաքականության վրա, գոյություն ունի մի համատարած կարծիք, որ այդ օրենքի պատշաճ կենսագործման համար անհրաժեշտ են ավելի գործուն մեխանիզմներ:

Հայաստանի կառավարությունը 2008-2012 թ.թ. իր ծրագրում ամրագրել է, որ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը խրախուսվելու է: Այս բնագավառում կառավարության տեսլականը սկսվում է ստվերային տնտեսության վերաբերյալ հատվածով: Համարվում է, որ կորպորատիվ պատասխանատվության ճանապարհին առաջին քայլը օրենքներին ենթարկվելն է եւ համապատասխան հարկերի վճարումը: Հետեւաբար, ԿՍՊ-ի ոլորտում կառավարության գործնականում բոլոր ջանքերը, մինչ այսօր, սեւեռված են եղել ընկերությունների համար գործունեության հավասար պայմանների ստեղծմանը եւ երաշխավորմանը, որ բոլոր կորպորատիվ քաղաքացիները վճարեն իրենցից պահանջվող բոլոր հարկերը: Չնայած վերջին երկու տարիների ընթացքում այս ոլորտում շատ ձեռքբերումներ են եղել, առկա են մի շարք ընկերություններ, որոնք պնդում են, որ իրենց մրցակիցները շարունակում են հաջողությամբ խուսափել հարկերի վճարումից: Նման իրավիճակում օրենքներին ենթարկվող ընկերությունները պայքարում են, որպեսզի դուրս չմնան մրցակցությունից, իսկ ԿՍՊ-ն՝ որպես ընկերություններին բիզնես առավելություններ տրամադրող գործիք, կորցնում է իր գրավչությունը:

ԿՍՊ-ի ոլորտում Հայաստանում սակավաթիվ ընկերություններ են փորձում ակտիվանալ, սակայն դրանք հիմնականում բազմերկրյա ընկերություններ են կամ օտարերկրյա ներդրումների մեծ մասնաբաժին ունեցող ընկերություններ:

Հայաստանում գործող որոշ ընկերություններ այս ոլորտում անուն են վաստակել եւ մեծ դեր են խաղում «կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» եզրույթի ժողովրդականության մեծացման գործում: Մակայն ցանկացած ընկերության մոտեցումը ԿՍՊ-ին պետք է լինի չափազանց հստակ եւ ռազմավարական՝ տարբերակում անելով ԿՍՊ-ի եւ այլ տեսակի գործունեության (բարեգործություն, առեստրային հովանավորչություն, եւ այլն) միջեւ: Միեւնույն ժամանակ, գոյություն ունի համընդհանուր կարծիք, որ հասարակությունն իսկապես շահում է այս նախաձեռնությունների արդյունքում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների նմանությամբ՝ այլ ընկերություններ եւս ներդրումներ են կատարում կրթության բնագավառում եւ համալսարանների հետ համատեղ աշխատում՝ ստեղծելու համար ծրագրեր, որոնք բանիմաց մասնագետների բազաներ կապահովեն տվյալ ընկերության եւ ամբողջ ճյուղի համար: Որոշ ընկերություններ ձգտում են կրթական գործընթացում տեխնոլոգիային ավելի մեծ տեղ տալ: Գյուղատնտեսական հումքով աշխատող որոշ ձեռնարկություններ կրթում են ֆերմերներին եւ աջակցում նրանց, որպեսզի վերջիններս բարելավեն բերքի որակը եւ ծավալը, ինչը բխում է թե՛ տվյալ ընկերության, թե՛ ֆերմերների եւ թե՛ երկրի ողջ տնտեսության շահերից:

Շահույթ չհետապնդող հատվածում մի քանի կազմակերպություններ աշխատում են այն ուղղությամբ, որ ԿՍՊ-ի եւ ձեռնարկությունների համար դրա կարեւորության մասին ավելի շատ տեղեկություններ հասանելի դառնան: ԿՍՊ հարցերով աշխատանքային խումբը մի ոչ ֆորմալ գործընկերություն է «Բրիտանական խորհրդի» հայաստանյան գրասենյակի, Միավորված ազգերի կազմակերպության Գլոբալ պայմանագրի գրասենյակի, «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի եւ Հայաստանում ամերիկյան առեստրային պալատի միջեւ: 2008 թվականից ի վեր, այս աշխատանքային խումբը Հայաստանում ԿՍՊ-ի թեմայով կազմակերպել է մի շարք համաժողովներ, քննարկումներ եւ գործնական սեմինարներ, որոնց մասնակցել են ավելի քան 50 կազմակերպություններ եւ մասնավոր ընկերություններ:

ՄԱԿ-ի «Գլոբալ պայմանագիրը» պատասխանատու ձեռնարկատիրության առաջնումար շահագրգիռ մասնավոր ընկերություններ եւ շահույթ չհետապնդող կազմակերպություններ միավորող՝ աշխարհի ամենամեծ ցանցն է: Այն 2000 թվականին ստեղծվել էր ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Կոֆի Անանի կողմից՝ որպես համաշխարհային նախաձեռնություն: Այն Հայաստանում մեկնարկեց 2006 թվականին: Ցանցի բոլոր անդամները պարտավոր են հարգել Գլոբալ պայմանագրի տասը հիմնական սկզբունքները, որոնք ներկայացված այս փաստաթղթի հավելված 2-ում: Այս փաստաթուղթը պատրաստելու օրերին Հայաստանում Գլոբալ պայմանագրի տեղական ցանցը ուներ 41 անդամ: Այս ցանցի հիմնական ձեռքբերումներից են չորս խոշոր ԿՍՊ ծրագրերի իրականացումը եւ 30-ից ավելի ընկերությունների համար ուսուցման տրամադրումը: Այն նաեւ կարեւոր դեր ունի՝ որպես երկխոսության հարթակ Հայաստանում գործարար հատվածի եւ քաղաքականություն մշակողների միջեւ:

Կառավարության ավելի լայն ներգրավումը ԿՍՊ օրակարգում կարող է հանգեցնել Հայաստանի համար մի շարք դրական զարգացումների: Փաստաթղթի հաջորդ բաժինը հիմնավորում է այս ոլորտում կառավարության ավելի լայն ներգրավման կարեւորությունը:

## ԿՍՊ ոլորտում կառավարության ավելի լայն ներգրավման հիմնավորում

Ինչպես նշել է Համաշխարհային բանկը, պետական հատվածի ներգրավումը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգին կարող է ամրապնդել այս գաղափարը եւ ապահովել բազմաթիվ օգուտներ զարգացող երկրների համար:<sup>5</sup> Կարևոր է այն, որ սա պետք է տեղի ունենա այն ժամանակ, երբ սահմանված են նվազագույն բնապահպանական եւ սոցիալական ստանդարտներ, որոնք հարգվում են հավասարակշռված ձևով: Նման իրավիճակներում կառավարությունները բազմաթիվ պատճառներ ունեն՝ քննարկելու կորպորատիվ քաղաքացիներին այնպիսի առավելություններ տալու հարցը, որոնք ավելին են, քան ընդամենը օրենքների ներթարկվելն է: Կառավարության կողմից այսպիսի ներգրավման հիմնավորումների ցանկը հետևյալն է.

- **ԿՍՊ-ն ազդում է պետության մրցունակության վրա**

ԿՍՊ-ն եւ պետության մրցունակությունը շաղկապված են մի շարք ձեւերով.

- Համաշխարհային բանկը եւ Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) ցույց են տվել, որ օտարերկրյա ներդրողները ուշադրություն են դարձնում տվյալ երկրում առկա ԿՍՊ իրավիճակին՝ որպես այն գործոններից մեկը, որոնց համապատասխան որոշվում է, թե արդյոք նրանք այդտեղ ներդրումներ կատարելու են, թե ոչ: Ներդրումներ կատարողների մեծամասնությունը ձգտում են պարզել, թե արդյոք գոյություն ունի հստակ դիրքորոշում (թե՛ օրենսդրական, թե՛ ոչ օրենսդրական միջոցների տեսքով) այն մասին, թե ինչպես է կառավարությունը պատժում անպատասխանատու ընկերություններին եւ խրախուսում կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն ստանձնած ընկերություններին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է ԿՍՊ օրակարգն օգտագործել՝ երկիրը օտարերկրյա ներդրումների համար ավելի գրավիչ վայր դարձնելու նպատակով:
- Հայաստանյան ընկերությունների կողմից ԿՍՊ գործողությունների կիրառման բարելավումը նույնպես կհանգեցնի շուկաների հասանելիության բարեկավման՝ այն ընկերությունների համար, որոնք ձգտում են իրենց ապրանքները կամ ծառայություններն արտահանել արտասահմանյան երկրներ: Եվրոպական եւ հյուսիսամերիկյան երկրների կողմից շարունակաբար մշակվում եւ ընդունվում են ԿՍՊ կողեր եւ ստանդարտներ: Եթե կառավարությունը կարող է ընկերություններին խրախուսել՝ բարելավել իրենց ԿՍՊ ռազմավարությունները, սա Հայաստանը կդարձնի ավելի մրցունակ մատակարար արտասահմանում:

<sup>5</sup> Համաշխարհային բանկ եւ Միջազգային ֆինանսական կորպորացիա [World Bank And International Finance Corporation], « Պետական հատվածի դերը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ամրապնդման գործում. արդյունքների գնահատում» [Public Sector Roles In Strengthening Corporate Social Responsibility: Taking Stock], 2004 թվական:

- Սոցիալական եւ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի հանրային բարիքների ստեղծման համար ԿՄՊ կիրառելը նույնպես կարող է կապվել մրցունակության բարելավման հետ: Օրինակ, կառավարությունը կարող է մասնավոր հատվածի հետ համագործակցել՝ բարելավելու համար կրթական համակարգը եւ հմտությունների վրա հիմնված ուսուցումը շաղկապել մասնավոր հատվածի կարիքների հետ: Սա կնպաստի ավելի մրցունակ աշխատուժի ձեւավորմանը, այնպիսի աշխատուժի, որն ավելի պատրաստված է աշխատանքի համար եւ ավելի գրավիչ է գործարար հատվածի համար՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային:

- **ԿՄՊ առաջնահերթությունները երկրե երկիր տարբեր են**

Այն դեպքում, երբ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ընդհանուր գաղափարը չի փոխվում, յուրաքանչյուր երկիր ունի առաջնահերթ խնդիրների սեփական համախումբը եւ մի առանձնահատուկ համատեքստ: Կառավարության ներգրավումը ԿՄՊ-ին կօգնի ձեւակերպել այնպիսի առաջնահերթություններ, որոնք բխում են երկրի գերակա շահերից: Քանի որ Հայաստանում գործող բազմերկրյա ընկերությունները կորպորատիվ սոցիալական պատասխանատվությամբ աշխատելու տեսակետից, որպես կանոն, գերազանցում են տեղական ձեռնարկություններին, անհրաժեշտ է, որ կառավարությունն օգնի ձեւակերպել ԿՄՊ այնպիսի օրակարգ, որն ընկալելի կլինի տեղական ընկերությունների համար, եւ որի կենսագործմանը նրանք հավասար պայմաններով կնպաստեն:

- **ԿՄՊ-ն նպաստում է տեղական ձեռնարկությունների ընդլայնմանը**

Երբ մասնավոր ընկերությունները ներդրումներ են կատարում համայնքներում, որպեսզի լուծեն մատակարարման շղթայի հետ կապված խնդիրներ, արդյունքում կարող է գրանցվել դրական տնտեսական զարգացում: Օրինակ, որեւէ գինեգործական ընկերություն կարող է որոշել՝ ներդրումներ կատարել խաղողագործների ուսուցման գործում եւ աջակցել նրանց՝ տրամադրելով սարքավորումներ կամ այլ ռեսուրսներ: Այսկերպ, տվյալ ընկերությունը նպատակ ունի ստանալ ավելի մեծ ծավալով ավելի լավ որակի հումք (տվյալ դեպքում՝ խաղող) եւ միեւնույն ժամանակ բարձրացնում է ֆերմերների կենսամակարդակը՝ նրանց համար ապահովելով ավելի մեծ եկամուտներ: Այսպիսի տեղական ձեռնարկությունը կարող է ավելի կատարելագործվել եւ զարգանալ, եթե կառավարությունը ակտիվ մասնակցություն ունենա նմանատիպ ձեռնարկումներում՝ աջակցելով դրանց եւ նպաստելով դրանց հարակայունությանը:

- **Օրենսդրությունը եւ ԿՄՊ պրակտիկան երբեմն կարող են հակասել միմյանց**

Հարկ է, որ կառավարությունները ներգրավված լինեն իրենց երկրներում ԿՄՊ միտումների ձեւավորման գործին՝ երաշխավորելու համար, որ որեւէ կերպ չեն խանգարի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանը: Վտանգը կայանում է նրանում, որ եթե մասնավոր ձեռնարկություններին թույլ տրվի ինքնուրույն ձեւակերպել ԿՄՊ օրակարգը, եւ եթե կառավարությունը հեռու մնա այդ գործընթացից, արդյունքում այն կարող է միջոցներ ձեռնարկել այլ ոլորտներում, որոնք ոչ միտումնավոր կերպով խոչընդոտներ կստեղծեն ԿՄՊ գործունեության համար: Միեւնույն ժամանակ, այնպիսի օրենսդրության մշակումը, որի նպատակն է բարելավել ԿՄՊ պրակտիկան, կարող է ավելի արդյունավետ դառնալ, եթե ստեղծվի

մասնավոր ընկերությունների հետ համագործակցությամբ: Օրինակ, գորգագործական ձեռնարկություններում աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված օրենսդրությունը կարող է նախատեսել կառավարության կողմից ներկայացված տույժեր եւ տուգանքներ նրանց համար, ովքեր չեն բավարարում պահանջվող չափանիշները: Բայց եթե ընկերությունները, որոնք գնում են այդ գորգերը, վերահսկում են իրենց մատակարարներին եւ մերժում են հույս գնել այնպիսի ձեռնարկություններից, որտեղ աշխատանքային պայմանները պահանջված ստանդարտից ցածր են, սա կարող է ավելի մեծ խթան հանդիսանալ, քան կառավարության կողմից կիրառվող տուգանքները: Հետեւաբար, կառավարությունը կարող է որոշել՝ խուսափել ոչ անհրաժեշտ օրենսդրության ընդունումը կազմակերպել փորձելուց, եւ սա կարող է նաեւ վերահսկման բեռը վերցնել կառավարության ուսերից:

- **ԿՄՊ-ն հանգեցնում է պետական եւ մասնավոր հատվածների միջեւ արդյունավետ գործընկերությունների ստեղծման**

Սա ԿՄՊ-ին առնչվող գործունեության մեջ կառավարության ներգրավման ամենաակնհայտ պատճառներից մեկն է. այս առումով Հայաստանում արդեն իսկ արձանագրվել են հաջողության մի քանի դեպքեր: Ենթակառուցվածքների հետ կապված եւ մի շարք այլ նախագծերում կառավարության, մասնավոր հատվածի եւ հասարակության կարիքները համընկնում են. այս դեպքերում գործընկերությունները ծախսարդյունավետ են եւ հանգեցնում են հարակալուն արդյունքների: 2009 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց Պետական եւ մասնավոր հատվածների միջեւ գործընկերության մասին հայեցակարգային փաստաթուղթ, որի նպատակն է գործունեության այս բնագավառի հետագա զարգացումը:

Հնարավոր է ամփոփել վերոշարադրյալ հիմնավորումները՝ պարզապես նշելով, որ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը կարող է հսկայական նպաստ բերել հարակալուն զարգացմանը: Կայուն զարգացումն, իր հերթին, գործնականում աշխարհի յուրաքանչյուր կառավարության նպատակներից է, եւ Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ: Որպեսզի ապահովվի այն, որ այսօր մենք մեր քաղաքացիների կարիքները հոգանք՝ առանց վնասելու ապագա սերունդների կարողությունը՝ բավարարել սեփական կարիքները, բոլոր երեք հատվածները՝ կառավարություն, մասնավոր ընկերությունները եւ քաղաքացիական հասարակությունը, պարտավոր են աշխատել համատեղ: Սա օգուտ կբերի նշված հատվածներից յուրաքանչյուրին, ինչպես նաեւ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:

## **ԿՄՊ ոլորտում կառավարության ներգրավման տիպային մոդելներ**

Համաշխարհային բանկը եւ Շրջակա միջավայրի եւ զարգացման միջազգային ինստիտուտը [International Institute for Environment and Development (IIED)] ստեղծել են ԿՄՊ ոլորտում կառավարությունների ներգրավման տարբեր մոդելների դասակարգման մի համակարգ:<sup>6</sup>

<sup>6</sup> Համաշխարհային բանկ եւ Շրջակա միջավայրի եւ զարգացման միջազգային ինստիտուտ [World Bank and IIED], «Պետական հատվածի դերը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ամրապնդման գործում. իրավիճակի հետազոտություն» [Public Sector Roles In Strengthening Corporate Social Responsibility: A Baseline Study], 2002 թ. հոկտեմբեր:

Այս համակարգը բաղկացած է պետական հատվածի չորս առանցքային դերերից եւ ԿՄՊ տասը առանցքային թեմաներից:

Պետական հատվածի չորս առանցքային դերերը հետեւյալն են.

- **Մանդատի սահմանում**

Համաձայն այս դերի, կառավարությունները հաստատում են սահմանումներ եւ ստանդարտներ մասնավոր հատվածի գործունեության համար, որոնք ամրագրվում են տվյալ երկրի օրենսդրության մեջ: Օրինակ, ընկերություններից կարող է օրենքով պահանջվել՝ ներկայացնել հաշվետվություններ ԿՄՊ թեմայով: Պարտադիր բնույթ ունեցող պահանջները ոչ միշտ են «խեղդող», եւ երբեմն դրանք հանգեցնում են նորարարությունների եւ զարգացման: Մեկ հայտնի օրինակ է այն, որ որոշ երկրներ ընկերություններից օրենքով պահանջում են օգտագործել արդյունաբերական թափոնների կառավարման՝ գոյություն ունեցող «լավագույն» տեխնոլոգիան: Քանի որ «լավագույն» տեխնոլոգիան փոխվում եւ կատարելագործվում է, ընկերությունները պարտավոր են հետ չմնալ եւ որդեգրել այն իրենց պրակտիկայում:

- **Օժանդակում**

Այս դերով կառավարությունները ընկերությունների համար հեշտացնում են ԿՄՊ գործելաոճերի որդեգրումը: Սրանց թվում կարող են լինել մի շարք տարբեր մոտեցումներ: Օրինակ, կառավարությունները կարող են ֆինանսավորում հատկացնել ԿՄՊ ոլորտում հետազոտության եւ ընկերությունների համար ուղենիշերի մշակման նպատակով: Կառավարությունները նաեւ կարող են օրենսդրական միջոցներ կիրառել՝ հարկային արտոնություններ սահմանելով այնպիսի ընկերությունների համար, որոնք ներդրումներ են կատարում համայնքում եւ խթանում զարգացումը: Աջակցող այլ միջոցների թվում են պիտակավորման համակարգերը եւ ԿՄՊ հաշվետվություններ ներկայացնելը խրախուսելը՝ ընկերություններին այս միջոցառումներն իրականացնելու համար փորձագիտությամբ եւ ռեսուրսներով ապահովելու միջոցով:

- **Գործընկերություն**

Այս դերի համաձայն՝ կառավարություններն աշխատում են մասնավոր հատվածի հետ համատեղ, որպեսզի հասնեն երկուստեք շահավետ նպատակների: ԻՆչպես նշվեց ավելի վաղ, գուցե սա այն դերն է, որին Հայաստանում ամենից լավ են ծանոթ: Գործընկերության օրինակներից է ենթակառուցվածքների բարելավումը, ինչպիսին են ընկերությունների կողմից ջրամատակարարման համակարգերում, ճանապարհների բարելավման ծրագրերում կատարվող ներդրումները, եւ այլն: Ընկերությունները կարող են համագործակցել Կրթության նախարարությունների հետ՝ մշակելու վերապատրաստման ծրագրեր, որոնք հետագայում իրենց կապահովեն հմուտ եւ որակյալ աշխատուժով: Ավելի լայն գործընկերությունները կարող են ներառել նաեւ շահույթ չհետապնդող կազմակերպություններին եւ տեղական խմբերին:

- **Կիրարկում**

Այս դերով կառավարությունները ձգտում են բարոյական եւ այլ կարգի աջակցություն ցույց տալ այն ընկերություններին, որոնք մյուս ընկերություններին գերազանցում են ԿՄՊ-ի գործնական կիրառման տեսակետից: Այն կարող է ներառել մրցանակների մի համակարգ, որի շրջանակներում պարբերաբար որոշվում են լավագույն ընկերությունները: Այն նաեւ կարող է արտացոլված լինել կառավարության գնումների քաղաքականության մեջ, ըստ որի, ԿՄՊ գծով լավ արդյունքներ գրանցած ընկերությունները մյուսների նկատմամբ առավելություններ են ստանում:

**ԿՄՊ տասը առանցքային թեմաները հետեւյալն են.**

- **Նվազագույն ստանդարտների սահմանում եւ դրանց կենսագործման ապահովում.** Պետական իշխանության մարմիններն ունեն ակնհայտ դեր՝ սահմանել օրենքներ եւ կանոններ, որոնց ընկերությունները պարտավոր են ենթարկվել: Այս կանոնների կատարումն ապահովելու գործում պետության դերը նույնպես պարզ է: Սակայն բացի այս կանոնների ընդունումը *թույլատրելուց*, իշխանությունը կարող է նաեւ *աջակցել* եւ *համագործակցել* ընկերությունների հետ՝ տվյալ ճյուղում նոր չափանիշներ սահմանելու նպատակով: Օրինակ, ընկերությունները կարող են աշխատել համապատասխան կառույցների հետ, ինչպիսին է Բնապահպանության նախարարությունը, որպեսզի սահմանեն շրջակա միջավայրի ազդեցությանը վերաբերող, պարտադիր ուժ չունեցող ստանդարտներ, եւ աշխատեն միասին՝ երաշխավորելու համար, որ ընկերություններ այդ ստանդարտները կյանքի են կոչում:
- **Գործարար հատվածի դերը պետական քաղաքականության մեջ.** Մասնավոր հատվածը սոցիալական եւ քաղաքական հարցերի լուծման գործում կարող է լուրջ դերակատար լինել: Օրինակ, ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության աստիճանը Հայաստանում չափազանց ցածր է: Պետությունը կարող է որոշել՝ այս խնդրի մեղմացման նպատակով ազդել ձեռնարկությունների վրա, եւ կրկին՝ սա կարող է արվել վերոնշյալ չորս դերերի միջոցով:
- **Կորպորատիվ կառավարում.** Կորպորատիվ կառավարման արդյունավետ վարքականոնը ընկերություններին առաջարկում է գործունեության ուղենիշեր, լավագույն փորձը ներկայացնող օրինակներ եւ կարող է ընդգրկել իրավական պահանջներ: Քանի որ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի [European Bank of Reconstruction and Development] օժանդակությամբ Հայաստանում մշակվել են Կորպորատիվ նոր վարքականոններ, այս փաստաթղթում կորպորատիվ կառավարման խնդրին մանրամասն անդրադարձ չի լինի:
- **Պատասխանատու ներդրումներ.** Սա վերաբերում է այն գաղափարին, որ ֆինանսական ներդրումներ պետք է կատարել միայն այնպիսի ընկերություններում, որոնք ունեն հաջող ԿՄՊ ռազմավարություններ եւ իրականացնում են համապատասխան գործունեություն: Այստեղ կառավարության դերը կարող է լինել կամ հնարավոր ներդրողներին ընկերությունների ԿՄՊ ռազմավարությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը կամ, ինքը՝ որպես հնարավոր

ներդրող, կառավարությունը կարող է որոշել՝ դժվարին ժամանակներում ֆինանսական աջակցություն ցույց տալ միայն այնպիսի ընկերությունների, որոնք պատշաճ միջոցառումներ են ձեռնարկում՝ իրենց համայնքներում շրջակա միջավայրի եւ սոցիալական առկա խնդիրների լուծման համար:

- **Բարեգործություն եւ համայնքային զարգացում.** Բազմաթիվ խոշոր ձեռնարկություններ եւ անհատ ձեռնարկատերեր որոշում են ժամանակ առ ժամանակ ներգրավվել բարեգործական միջոցառումներում, եւ, ինչպես նշվեց վերը, սա գնալով տարածում է ստանում նաեւ Հայաստանում: Կառավարությունը կարող է նախընտրել՝ գործ ունենալ այս ընկերությունների հետ եւ, երկրի զարգացման սեփական ծրագրի հիման վրա, կարող է առաջարկել հնարավոր վայրեր, ուր նրանք կարող են ուղղել իրենց բարեգործական գումարները: Կառավարությունը կարող է նաեւ ֆինանսական մասնակցություն ունենալ, օրինակ՝ մասնավոր ընկերությունների հետ 50-50 հիմքով հատկացումներ կատարել որոշակի կրթական կամ մշակութային հաստատությունների:
- **Շահագրգիռ կողմերի մասնակցություն.** Կառավարությունը պետք է կապ պահի մասնավոր հատվածի հետ եւ վերջինիս ներգրավի երկրում ազրգացմանն ուղղված միջոցառումներում: Կառավարությունը կարող է նաեւ որոշել՝ իրավագորել շահույթ չհետապնդող հատվածը, որպեսզի վերջինս ավելի սերտորեն եւ տարբեր եղանակներով (օրինակ՝ տեղեկությունների եւ ուղեցույցների տրամադրման միջոցով) աշխատի մասնավոր ընկերությունների հետ:
- **ԿՄՊ-ին համահունչ արտադրություն եւ սպառում.** Աշխարհով մեկ աճում է այն ընկերությունների թիվը, որոնք ներգրավվում են «կանաչ» ապրանքների եւ ծառայությունների արտադրությանը: Օրինակ, փոքր ձեռնարկությունները սկսում են արեւային կամ քամու էներգիան օգտագործող համակարգեր կամ «արդարացի առևտրի» առարկա հանդիսացող ապրանքներ, որոնց դեպքում մատակարարների շղթան խիստ վերահսկողության տակ է: Կառավարությունը կարող է խրախուսել նման ընկերությունների ավելացումը՝ օրենսդրության կամ այլ միջոցներով, օրինակ՝ գնումներ կատարելիս նման ընկերություններին առավելություն տալու միջոցով:
- **ԿՄՊ-ին համահունչ հավաստագրում.** Որոշ երկրների կառավարություններ ունեն ընկերությունների համար նախատեսված պարզեւատրումների եւ հավաստագրման համակարգեր: Սա նշանակում է, որ պետությունը մասնավոր հատվածին ապահովում է ստանդարտների մի ցանկով, որոնց նրանք պետք է բավարարեն, եւ որպես հետեւանք՝ պետությունը կարող է պարբերական տեսչության ենթարկել մասնավոր ընկերություններին: Փոխարենը, ընկերություններն ստանում են պետության կողմից հաստատված հավաստագիր, որը պահպանում եւ բարձրացնում է տվյալ ընկերության հեղինակությունը սպառողների, ներդրողների, աշխատողների եւ այլոց շրջանում: Սա նաեւ ընդգրկում է պիտակավորման համակարգեր, ինչպիսիք են էկո-պիտակավորումը կամ սոցիալական պիտակավորումը:

- **ԿՄՊ-ին համահունչ հաշվետվություններ.** Չնայած Հայաստանում մի քանի ընկերություններ սկսել են կամավոր հիմունքներով պատրաստել ԿՄՊ հաշվետվություններ, որոշ երկրներում կառավարությունները ԿՄՊ թեմայով հաշվետվությունների ներկայացումը դարձրել են պարտադիր պահանջ: Հայաստանում կառավարությունն այս ոլորտում կարող է ստանձնել նախնական փուլերում տեղեկություններ տրամադրողի դեր՝ ընկերություններին տրամադրելով ԿՄՊ հաշվետվություններ ներկայացնելու ընդունելի ուղեցույցներ՝ հիմնված այլ երկրներում կիրառված մոտեցումների վրա:
- **Բազմակողմ գործընթացներ և կոնվենցիաներ.** Գոյություն ունեն մի շարք միջազգային կազմակերպություններ և կառույցներ, որոնք աշխատում են մասնավոր հատվածի հետ՝ կատարելագործելու համար նրանց ԿՄՊ ռազմավարությունները և գործունեությունը: Կառավարությունը կարող է իրավասություն տալ այս կազմակերպություններին և սերտորեն համագործակցել դրանց հետ՝ կազմակերպելով համատեղ միջոցառումներ՝ հնարավորինս լայն շրջանակի լսարանում ԿՄՊ-ի վերաբերյալ տեղեկությունների տարածման նպատակով: Հայաստանում այս դերը կարող է ստանձնել ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի տեղական ցանցը կամ ԿՄՊ աշխատանքային խումբը:

## Այլ երկրներում կառավարությունների կողմից կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խթանման փորձը

Այլ երկրների փորձը կարող է օգնել Հայաստանի կառավարությանը տեղեկացնել հնարավոր ինստիտուցիոնալ այն ձեռնարկի վերաբերյալ, որը կարող է ընդունվել մեր երկրում: Մեծաթիվ երկրներում՝ սկսած արեւմտաեվրոպականներից, որտեղ ԿՍՊ-ն ավելի քան մեկ տասնամյակի պատմություն ունի, մինչև Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներ, որտեղ այս հայեցակարգը համեմատաբար նոր է, գոյություն ունեն տարատեսակ կառավարական կառույցներ եւ վարչություններ, որոնք ներգրավված են ԿՍՊ-ի հետ կապված աշխատանքների ղեկավարման մեջ:

Հավելված 1-ը ներկայացնում է մի շարք երկրներում ԿՍՊ-ում ընդգրկված պետական կառույցների ամփոփ պատկերը՝ ԿՍՊ-ի խթանմանն ուղղված գործողությունների մի քանի օրինակներով, որոնք իրականացվել կամ աջակցություն են ստացել այս երկրների կառավարությունների կողմից:

Կան մի քանի ընդհանուր կետեր եւ հետաքրքիր օրինակներ, որոնք արժե ուշադրության առնել առանձին.

- Շատ երկրներում կառավարությունն ակտիվ մասնակցություն ունի ԿՍՊ-ի վերաբերյալ իրազեկության տարածման հարցում: Անկախ նրանից՝ դա ունի ձեւավորված առանձին միջգերատեսչական կառույցի, ճյուղային նախարարության ստորաբաժանման կամ պարզապես այս առաջադրանքը ստանձնած թիմի ձեւ, շատ կառավարություններ գտել են, որ բիզնեսը եւ շահույթ չհետապնդող հատվածը պետք է ունենան ճիշտ սոցիալական պատասխանատվության մասին ընդհանուր ընկալում, եւ կառավարությունը կարող է լինել այն դերակատարը, որը կհամակարգի այս ոլորտը: Կառավարությունները սա կատարել են ձեռնարկներ հրատարակելու եւ վեբկայքեր ստեղծելու միջոցով, որոնք ռեսուրսներ են ապահովում ԿՍՊ-ի կարեւորությունը հասկանալու հարցում՝ ընկերություններին օգնելով իրենց ԿՍՊ ռազմավարությունների ձեւավորման հարցում, խորհրդատվություն ապահովելով հաշվետվությունների կազմման եւ չափանիշների որդեգրման հարցերում:
- Կառավարությունները ձեւավորում են միջճյուղային խորհրդատվական վարչություններ եւ խորհրդակցություններ անցկացնում բոլոր հատվածները ներկայացնող շահառուների հետ՝ ավելի ընդգրկուն ԿՍՊ ռազմավարություն մշակելու կամ երկրի համար կայուն զարգացման ծրագիր կազմելու ժամանակ: Սա ապահովում է, որ լսելի լինեն բոլոր հատվածների ձայները, եւ հաշվի առնվեն բոլոր տեսակետները՝ նախքան ԿՍՊ-ին առնչվող օրենսդրության, կանոնակարգման կամ մասնավոր հատվածին խրախուսելուն ուղղված այլ միջոցների վերաբերյալ կկայացվեն որոշակի որոշումներ:
- Կառավարությունները հաճախ աջակցություն են ցուցաբերում մասնավոր կամ ոչ առևտրային հատվածում արդեն իսկ ձեւավորված կառույցներին, փոխանակ ինչ-որ բան գրոյից սկսելու: Շատ երկրներում դա Առևտրի պալատն է, ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիրը կամ ԿՍՊ-ի, շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ

իրագրելիության, մարդու իրավունքների ոլորտում աշխատող մի որեւէ ոչ կառավարական կազմակերպություն, եւ այլն:

- Գործիքներից մեկը, որ շատ կառավարություններ ընտրել են այս ոլորտում, պետական գնումներն են: Միեւնույն ժամանակ, կառավարությունների համար կարելու է նաեւ ցույց տալ, որ իրենք «պատասխանատու» են՝ պայմանագրեր չտրամադրելով այն ընկերություններին, որոնք հանդես չեն բերում կորպորատիվ պատասխանատվություն: Այն երկրներում, որտեղ կառավարությունները մրցույթների հաղթողներին որոշում են միավորների հիման վրա, ԿՍՊ-ն հանդիսանում է առանձին չափորոշիչ, որը կարող է հայտատուներին լրացուցիչ միավորներ բերել եւ նրանց առավելություն տալ այն մրցակիցների նկատմամբ, որոնք ԿՍՊ իրականացման փորձ չունեն: Սա խթանում է ԿՍՊ-ն մասնավոր հատվածում եւ նաեւ բարելավում կառավարության վարկը այն քաղաքացիների աչքում, ովքեր մտահոգ են սոցիալական եւ բնապահպանական խնդիրներով:

Հետեւյալ օրինակները նկարագրում են չորս երկրների կառավարությունների որդեգրած տարբեր կառուցվածքները եւ նրանց կողմից այս ոլորտում ձեռնարկված գործնական քայլերը:

### ***Միացյալ Թագավորություն***

Երկար ժամանակ ՄԹ-ն համարվում էր ԿՍՊ-ի՝ որպէս հայեցակարգ, մշակման համաշխարհային լիդերներից մեկը: Այստեղ մեկնարկել են աշխարհում հայտնի բազմաթիվ կրթական ծրագրեր, իսկ նախորդ կառավարությունում գոյություն ունեւորող Կորպորատիվ պատասխանատվության հարցերով նախարարի պաշտոն: Այս փաստաթուղթը կազմելու պահին նոր ձեւավորված կոալիցիոն կառավարությունը ամբողջովին չի ձեւավորել ԿՍՊ առաջնորդման ոլորտում իր ռազմավարությունը, սակայն ակնկալվում է, որ այս ոլորտում ակտիվ աշխատանքը կշարունակվի: Կառավարության զեկույցից վերցված հետեւյալ հատվածը հստակորեն ցույց է տալիս, որ ԿՍՊ-ին տրվող կարեւորությունը խարսխված է այն համոզմունքի վրա, որ այն հանուն երկրի տնտեսական շահի է.

*«Կառավարությունը կարելու է դերակատարում ունի ճիշտ մթնոլորտի խթանման եւ կորպորատիվ պատասխանատվության հիմնավորման առաջնորդման հարցում՝ ինչպէս երկրի ներսում, այնպէս էլ միջազգային բեմահարթակում, ինչպէս նաեւ առաջնորդելը դեպի կոնսենսուսի կայացում ավելի լայն տեսլականի եւ գործողությունների առաջնահերթությունների վերաբերյալ: Մենք ցանկանում ենք նպաստել, որ ՄԹ բոլոր մասնավոր ընկերությունները գիտակցեն Կորպորատիվ պատասխանատվության ռազմավարական առավելությունը եւ կամավոր գործողություններ ձեռնարկեն իրենց վարքագծի չափանիշները նվազագույն օրենսդրական պահանջներից ավելի բարձրացնելու ուղղությամբ: Եւ ամեն ինչից զատ, մենք ցանկանում ենք կապ հաստատել այն*

<sup>7</sup> Նորին Մեծության կառավարություն [Her Majesty's Government], «Հաշվետվություն կորպորատիվ պատասխանատվության մասին» [Corporate Responsibility Report], 2008 թվական:

*ընկերությունների հետ, որոնք շարունակում են վստահ լինել իրենց բիզնես հաջողության մեջ Կորպորատիվ պատասխանատվության ունեցած դերին:»*

Ստորև Միացյալ Թագավորության կառավարության կողմից երկրում ԿՍՊ-ն առաջնորդելու ուղղությամբ ձեռնարկված գործողությունների որոշ առանձին օրինակներ են.

- 2006 թվականին ընդունված՝ «Ընկերությունների մասին» օրենքը ուրվագծեց ընկերությունների կառավարող տնօրենների եւ գլխավոր գործադիր տնօրենների ակնկալվող դերը, որը ներառում է նաեւ ժամանակի հատկացում ԿՍՊ հետ կապված գործերին: Օրենքը նաեւ սահմանեց «փայտոլիքոջ արժեքի գաղափարը», որով ընդգծվում էր խնդիրների ավելի լայն շրջանակ դիտարկելու անհրաժեշտությունը, քան պարզապես շահույթի սահմանների ընդլայնումն է, քանի որ սա պետք է հանգեցնի հենց իրենց փայտերերի ավելի մեծ օգուտին: «Ընկերությունների մասին» օրենքը նաեւ ընդլայնեց «Գործարար վերլուծության» շրջանակները, որ ՄԹ ընկերություններից արդեն իսկ պահանջվում էր տրամադրել: Նոր «Գործարար վերլուծությունը» նաեւ ներառում էր էթիկայի, սոցիալական եւ բնապահպանական խնդիրներ:
- Երրորդ հատվածի գրասենյակը հիմնվեց՝ առաջ մղելու համար կառավարության եւ ոչ առևտրային հատվածի գործընկերությունը: Այս գործընկերությունը շատ հաճախ վերաճում են բազմաշահառու ծրագրերի, որոնք ներգրավվում էր նաեւ մասնավոր հատվածին:
- 2008-ին Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման գործակալությունը (DFID) եւ «Զեթըմ հաուսը» հիմնեցին «Զարգացմանն ուղղված գնումներ» ֆորումը, որի անդամներ էին ՄԹ եւ միջազգային գլխավոր սուպերմարկետների մեծամասնությունը: Այս սուպերմարկետները մշակեցին եւ իրականացրին մատակարարման էթիկական շղթայի մեխանիզմներ՝ ապահովելու համար, որ իրենց կողմից վաճառվող բոլոր ապրանքները ստացվեն այնպիսի մատակարարներից, որոնք առանց բարոյական կամ իրավական ռիսկերի/խոչընդոտների:
- ՄԹ կառավարությունը նաեւ ըստ տնտեսության ճյուղերի առանձնահատուկ աջակցություն է ցուցաբերում ձեռնարկություններին, այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսիք են Բազմամանրաթելային համաձայնագրի (MFA) ֆորումը տեքստիլ արդյունաբերության համար, Արդյունահանող ձեռնարկությունների թափանցիկության նախաձեռնությունը (EITI)՝ նավթի, գազի եւ լեռնային արդյունաբերության համար, Թափանցիկ բժշկության դաշինքը (MeTA)՝ դեղագործական արդյունաբերության համար, Շինարարության ոլորտի թափանցիկության (CoST) նախաձեռնությունը եւ այլն:
- Կառավարությունը ձեռնարկություններին ապահովում է մի շարք առցանց ռեսուրսներով, որոնք նրանք կարող են օգտագործել ԿՍՊ-ն ավելի լավ ընկալելու եւ նաեւ կառավարության պահանջներին իրենց համապատասխանությունը բարելավելու համար: Այսպիսի ռեսուրսների օրինակ է «Ածխածնային հիմնադրամը» («Carbon Trust») ([www.carbontrust.co.uk](http://www.carbontrust.co.uk)), որը կառավարությունից

Էական ֆինանսավորում ստացող մասնավոր ընկերություն է: «NetRegs»-ը ([www.netregs.gov.uk](http://www.netregs.gov.uk)) բնապահպանական ուղենիշերի վերաբերյալ անվճար խորհրդատվություն է տրամադրում ընկերություններին:

- Կառավարությունը համագործակցեց «Բիզնեսը համայնքում» (Business in the Community) կառույցի հետ, որն առաջատար ոչ առևտրային կազմակերպություն է ԿՄՊ ոլորտում, որի նպատակն է Կորպորատիվ պատասխանատվության համաթվի մշակումը, որից՝ որպես ԿՄՊ չափորոշիչ, ընկերությունները կարող են օգտվել իրենց գործունեությունը գնահատելու համար:

### ***Իտալիա<sup>8</sup>***

Իտալիայի կառավարությունը մշակել է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առաջնորդական ռազմավարություն՝ բազմաշահառուության տեսանկյունից եւ հենվելով վարից վեր ու վերից վար մոտեցումների վրա: Ռազմավարությունը նաեւ դերակատարում ունի ինչպես կենտրոնական կառավարության, այնպես էլ տարածքային եւ տեղական իշխանությունների համար: Կառավարության ստանձնած որոշ գործողություններ բերվում են ստորել՝ դասակարգված ըստ առնչվող շահառուների խմբի:

- Կառույցներ պետական իշխանության համակարգում.
  - Պետական բոլոր մրցույթների համար մշակվել է իրականացվել են «կանաչ պետական գնումների» քաղաքականություններ.
  - Չինաստանի եւ Միացյալ Թագավորության հետ կնքվել են միջազգային համաձայնագրեր կայուն զարգացման եւ կորպորատիվ պատասխանատվության վերաբերյալ.
  - Իտալիայում անցկացվել են Եվրահանձնաժողովի միջոցառումներ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության թեմայով, կազմակերպվել են համաժողովներ.
  - Պետական համալսարաններին եւ հաստատություններին տրամադրվել է ֆինանսավորում ԿՄՊ վերաբերյալ հետազոտությունների անցկացման համար՝ խրախուսելու համար տեղերում հետազոտությունների անցկացումը եւ գիտելիքի հարստացումը:
- Կառավարությունը գործարար հատվածի հետ համագործակցությամբ.
  - Հիմնվել են ԿՄՊ մրցանակներ, եւ ԿՄՊ լավ քաղաքականություն վարող ընկերությունները պարբերաբար խրախուսվում են կառավարության կողմից.
  - ԿՄՊ հայեցակարգը առաջ մղելու համար կառավարությունն օգտագործել է գոյություն ունեցող վեբկայքեր, հանդեսներ եւ այլ լրատվամիջոցներ.
  - Գործարար հատվածի համար մշակվել են կառավարման գործիքներ՝ ԿՄՊ իրականացումը խրախուսելու համար:

<sup>8</sup> Բաքլենդ, Տենկատի եւ Միդտան [Buckland, Tencati and Midttun], «Կորպորատիվ պատասխանատվության հարցում կառավարության փոփոխվող դերը» [The Changing Role of Government in Corporate Responsibility], 2006 թվական:

- Կառավարությունը՝ շահույթ չհետապնդող հատվածի հետ համագործակցությամբ.
  - Ոչ կառավարական կազմակերպությունները խրախուսվում են գործարար հատվածի գործունեության վերաբերյալ զեկույցներ ներկայացնելու հարցում.
  - Կառավարությունը ֆինանսական միջոցներ է հատկացրել շահույթ չհետապնդող կազմակերպություններին՝ խրախուսելու համար ԿՍՊ վերաբերյալ հետազոտությունների և հանրային իրազեկման քարոզարշավների անցկացումը.
  - Ոչ կառավարական կազմակերպությունները նաև խրախուսվում են՝ կառավարությանը շարունակաբար տեղեկացնելու ԿՍՊ վերաբերյալ հանրային կարծիքի մասին՝ նպաստելու համար կառավարության ռազմավարության արդյունավետության մշտադիտարկմանը:
- Կառավարությունը՝ գործարար և շահույթ չհետապնդող հատվածների հետ համագործակցությամբ.
  - Հիմնվեց Սոցիալական պատասխանատվության իտալական կենտրոն (I-CSR), որում ընդգրկված էին բոլոր հատվածները ներկայացնող շահագրգիռ կողմեր.
  - Հիմնվեցին տարբեր շահագրգիռ կողմեր ընդգրկող գործընկերություններ՝ երկրի առջև ծառայած սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծման նպատակով:

### ***Իսպանիա<sup>9</sup>***

2008 թվականին Իսպանիան հիմնեց Կորպորատիվ պատասխանատվության ազգային խորհուրդ: Այս Խորհրդի նպատակները հետևյալն էին.

- Ապահովել ԿՍՊ վերաբերյալ բանավեճի ֆորում գործարար կազմակերպությունների և արհմիությունների, պետական մարմինների և այլ կազմակերպությունների միջև՝ ծառայելով որպես Իսպանիայում ԿՍՊ զարգացման հենք:
- Խրախուսել ԿՍՊ վերաբերյալ նախաձեռնությունները և, որպես իր խորհրդատվական և խորհրդակցական գործառույթների մի մաս, միջոցառումներ, որոնք հատուկ ուշադրություն են դարձնում փոքր և միջին ձեռնարկությունների բացառիկությանը.
- Պատեհ դեպքերում հաշվետվություններ ներկայացնել նախաձեռնությունների և կառավարության սահմանած կանոնակարգերի վերաբերյալ, որոնք ազդում են գործարար հատվածի, պետական և մասնավոր կազմակերպությունների գործունեության վրա:
- Առաջ մղել ԿՍՊ չափանիշներն ու բնութագրերը և հարակայունության թեմայով զեկույցները, ինչպես նաև ապահովել տվյալների մշակման և մշտադիտարկման գործիքներ:

<sup>9</sup> Ministerio de Trabajo y Asuntos Sociales, Real Decreto 221/2008 por el que se crea y regula el Consejo Estatal de Responsabilidad Social de las Empresas, 15 February 2008

- Վերլուծել ԿՄՊ զարգացումը Իսպանիայում, Եվրամիության եւ երրորդ աշխարհի երկրներում եւ զեկուցել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առնչվող գործողությունների վերաբերյալ:

Խորհուրդը բաղկացած է Նախագահից, որը Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարն է, գործարար կազմակերպություններ ներկայացնող տասներկու անդամներից, արհմիություններ ներկայացնող տասներկու անդամներից, ԿՄՊ հարցերի մասին գիտակ ոչ առեստրային կազմակերպություններ ներկայացնող տասներկու անդամներից եւ կառավարությունը ներկայացնող տասներկու անդամներից, որոնցից ութը՝ կենտրոնական կառավարությունից, իսկ չորսը՝ տարածքային եւ տեղական իշխանություններից:

Ստորեւ ներկայացվում են Կորպորատիվ պատասխանատվության ազգային խորհրդի կողմից որպես առաջնահերթ սահմանված ոլորտները.

- Բազմազանության կառավարում եւ սոցիալական կապակցվածություն.
- Մասնակցություն տնտեսության արտադրողականության բարձրացմանը.
- Թափանցիկություն եւ հաղորդակցություն.
- Սոցիալապես պատասխանատու ներդրումներ.
- ԿՄՊ ինտեգրումը կրթության մեջ:

Ի լրումն, ձեւավորվել են աշխատանքային խմբեր՝ ընթացիկ կարիքները բավարարելու համար, օրինակ՝ 2009 թվականին ձեւավորվեց տնտեսական ճգնաժամի ժամանակներում ԿՄՊ-ի հարցերով աշխատանքային խումբ:

## ***Լիտվա<sup>10</sup>***

Լիտվան շատ ակտիվ հետաքրքրություն է հանդես բերել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության զարգացման հարցում եւ այն դարձրել դինամիկ, մրցակցային եւ հարակալուն տնտեսության ստեղծմանն ուղղված իրենց ռազմավարության բաղկացուցիչ մաս: Սոցիալական ապահովության եւ աշխատանքի նախարարության կողմից առաջնորդությամբ՝ խնդիրները, որ ԿՄՊ առաջմղման 2006-2008 թ.թ. ռազմավարության մեջ նրանք դրել էին իրենց առջեւ, հետեւյալն էին.

- ԿՄՊ-ի ավելի լավ ընկալման խթանում.
- Մասնավոր հատվածի՝ ԿՄՊ գործողություններ իրականացնելու կարողության բարելավում.
- ԿՄՊ զարգացման իրավական հենքի բարելավում:

Այս խնդիրներից յուրաքանչյուրը իր հետեւում ուներ ուրվագծված գործողությունների համախումբ: ԿՄՊ ավելի լավ ընկալման խթանումը պետք է տեղի ունենար գործարար հատվածի փորձագետների կողմից պատրաստված ձեռնարկի տպագրման եւ տարածման,

<sup>10</sup> Լիտվայի Աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարություն [Ministry of Labor and Social Security of the Republic of Lithuania], «2006-2008 թ.թ. կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առաջմղմանն ուղղված միջոցառումների ցանկի ընդունումը» [The Adoption of Measures to Promote Corporate Social Responsibility in the Period 2006-2008], դեկտեմբեր, 2005 թվական:

համանման տեղեկություն պարունակող վեբկայքի ստեղծման, մասնավոր եւ շահույթ չհետապնդող հատվածների ներկայացուցիչների մասնակցությամբ «կլոր սեղանների», ինչպես նաեւ ԿՄՊ վերաբերյալ ազգային եւ միջազգային համաժողովների կազմակերպման միջոցով:

Բարելավելու համար մասնավոր հատվածի՝ ԿՄՊ գործողությունները իրականացնելու կարողությունը, Լիտվայի կառավարությունը, ոլորտի փորձագետների հետ խորհրդակցելով, մշակեց վերապատրաստման ծրագիր մասնավոր հատվածի համար: Նրանք նաեւ մշակեցին քաղճառայողների վերապատրաստման մի դասընթաց՝ նրանց հայեցակարգին ծանոթացնելու համար: Կառավարությունը նաեւ ստեղծեց կրթական ծրագրեր ավագ դպրոցների եւ համալսարանների համար, որոնք պետք է բարելավեն ԿՄՊ ընկալումը այս լսարաններում եւ դպրոցներում զարկ տային այնպիսի գործողությունների, որոնք տանում են դեպի հասարակության մեջ գործարար ոլորտի դերի վերաբերյալ քննարկումների: Եւ վերջապես, կառավարությունը մշակեց հետազոտությունների ծրագիր՝ խթանելու համար ԿՄՊ վերաբերյալ տեղական ուսումնասիրությունների եւ սոցիոլոգիական հարցումների անցկացումը:

ԿՄՊ զարգացման իրավական հենքը բարելավելու համար կառավարությունը ստեղծեց մի մշտական համակարգող կոմիտե, որը պետք է ուսումնասիրի Եվրամիության անդամ այլ երկրների փորձը եւ մշակի մի համապարփակ օրենսդրական փաթեթ:

Սույն ռազմավարության մեջ թվարկված գործողությունները ֆինանսավորում են ստացել պետական բյուջեից, Եվրամիության մասնագիտացված հիմնադրամներից, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ԿՄՊ միջազգային աջակցության ծրագրերի եւ գործարար միավորումների կողմից: Լիտվայի կառավարությունը ներկայումս վերջնական տեսքի է բերում սույն ռազմավարության շարունակությունը, որը կվերաբերի մինչեւ 2013 թվականն ընկած ժամանակահատվածին:

## Կառավարության դերը ԿՄՊ-ի առաջխաղացման գործում

### *Կառուցվածքային հարցեր*

Այլ երկրների՝ նախորդ բաժնում եւ հավելված 1-ում ներկայացված փորձը ցույց է տալիս, որ երկրում ԿՄՊ հայեցակարգի մշակումը կարող է առաջնորդել պետական եւ ոչ պետական կառույցների մի լայն շրջանակ: Այդ շրջանակում որպես կանոն տեղ են գտնում երկու նախարարություններ՝ Էկոնոմիկայի նախարարությունը եւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը (որոնք տարբեր երկրներում ունեն տարբեր անվանումներ):

Հայաստանում ԿՄՊ առաջխաղացման հարցում կառավարության դերը պլանավորելիս, անհրաժեշտ է դիտարկել հետևյալ առանցքային գործոնները.

- Կառավարական կառույցները կարիք ունեն հասկանալու երկրի գործարար համատեքստը եւ ունակ լինելու ազդել այդ համատեքստի, երկրում գործունեություն ծավալված ընկերությունների, ինչպես նաև գործարարների ասոցիացիաների եւ այլ համապատասխան կառույցների վրա:
- Հարկ է, որ ԿՄՊ-ն ճանաչվի որպես գործիք, որն առաջին հերթին նախատեսված է ողջ երկրի տնտեսական մրցունակության զարգացման համար: ԿՄՊ-ն կհանգեցնի նաև որոշակի սոցիալական եւ բնապահպանական հարցերի կառավարմանը կամ լուծմանը, սակայն առաջնային շարժիչ ուժը պետք է լինեն այն բիզնես օգուտները, որ ընկերությունները (եւ Հայաստանի տնտեսությունը՝ որպես ամբողջություն) կստանան դրա պատշաճ իրականացումից:
- ԿՄՊ-ն, ինչպես նախկինում նշվել է, երկրին հատուկ բնութագրեր ունի, որոնք հիմնվում են տվյալ երկրի տնտեսության հաջողակ հատվածների վրա: ԿՄՊ-ի առաջնահերթություններն անհրաժեշտ է համապատասխանեցնել երկրի՝ որպես ամբողջության, տնտեսական զարգացման ռազմավարության առաջնային խնդիրներին: Սա հատկապես տեղին է, երբ ԿՄՊ-ն համեմատաբար նոր հայեցակարգ է տվյալ երկրի համար:

Հիմնվելով այս դիտարկումների վրա, Հայաստանում ԿՄՊ-ի զարգացման համար կառավարության դերի առումով լավագույն տարբերակը կլինի այդ դերը վերապահել Էկոնոմիկայի նախարարությանը: Քանի որ Հայաստանը դեռևս գտնվում է ԿՄՊ-ի զարգացման վաղ փուլում, այդ դերը որոշ ժամանակ կարող է իրականացվել Էկոնոմիկայի նախարարության համապատասխան վարչության կողմից, մինչև կմշակվի գործողությունների ավելի ընդգրկուն ծրագիր:

### *Գործողությունների նախնական ծրագիր*

Հայաստանում ԿՄՊ-ի զարգացման այս վաղ շրջանում ոչ արդյունավետ կլինեն գործողությունների ծավալուն ծրագիր ունենալը, որն իրականացման համար շատ

ռեսուրսներ կպահանջեր: ԿՄՊ-ն որոշակի կայուն հարթակի հասցնելու համար շատ ավելի տեղին է արդյունավետ կլինի գործողությունների ամփոփ ծրագիր ունենալը, որը կանդրադառնա հիմնական խոչընդոտներին: Այն բանից հետո, երբ այդ ծրագիրը հաջողությամբ կիրականացվի, իրավիճակի ուսումնասիրությունը կառավարությանը թույլ կտա ավելի ընդգրկուն ռազմավարություն մշակել եւ նոր քայլեր ձեռնարկել գրանցված ձեռքբերումները կոնսոլիդացնելու ուղղությամբ:

Հայաստանում ԿՄՊ-ի զարգացման առումով վեր հանված հիմնական խոչընդոտներից մեկը սահմանվել է որպես **տեղեկատվության պակաս**: ԿՄՊ-ի հայեցակարգի հստակ ըմբռնումը բացակայում է մասնավոր հատվածում (որտեղ շատ փոքր թվով ընկերություններ են տարբերակում այդ գաղափարը կորպորատիվ բարեգործությունից). նույնը կարելի է ասել նաև կառավարության, շահույթ չհետապնդող հատվածի եւ ընդհանրապես հասարակության համար: Որպեսզի հնարավոր դառնա ԿՄՊ-ի ապագա զարգացումը, կառավարությունը պետք է առաջին հերթին աջակցի Հայաստանում այդ հասկացության հստակ ըմբռնման ապահովմանը: Ինչն ամենակարևորն է, կառավարությունը պարտավոր է կրթել իր սեփական կադրերին, ինչպես նաև ընդհանուր հանրությանը:

Մյուս խոչընդոտը, որ նշել էին Հայաստանում գործող ընկերությունները, ԿՄՊ-ի իրականացման համար **խթանների բացակայությունն է**: Այս խոչընդոտն ունի մի շարք ենթագործոններ: Հայաստանում նշանակալի չափերով ստվերային տնտեսության առկայությունը նշանակում է, որ որոշ ընկերություններ իրենց մրցակիցների հետ միեւնույն հարթության վրա չեն գտնվում: Եթե մրցակիցը չի վճարում սահմանված բոլոր հարկերը, ապա դժվար է շուկայում գոյություն պահպանել պարզապես «կանոններով խաղալով», եւ տվյալ ընկերությանը ԿՄՊ-ն չի կարող մրցակցային առավելություն առաջարկել: Այդ ենթագործոնի առումով Հայաստանի կառավարությունը քայլեր է ձեռնարկում , որոնք ուղղված են ստվերային տնտեսության կրճատմանը եւ դրան առանձին ադրադարձ այստեղ չի արվի: Մեկ այլ ենթագործոն է կառավարության կողմից տրամադրվող եւ ԿՄՊ-ի առաջխաղացմանը միտված հարկային արտոնությունների կամ այլ խրախուսող գործոնների բացակայությունը: Մինչ կառավարությունն այս անգամ շարունակում է հաստատակամ մնալ հարկային արտոնություններ սահմանելուց հրաժարվելու հարցում, կան մի շարք այլ սխեմաներ, որոնք կարելի է իրականացնել՝ ընկերություններին կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բարելավման առումով խթաններ տրամադրելու համար:

Գործողությունների նախնական ծրագիրը պետք է գործ ունենա այդ երկու խոչընդոտների հետ, որպեսզի հնարավոր դառնա ԿՄՊ-ի հետագա զարգացումը Հայաստանում: Գործողությունների ծրագիրը կարելի է ամփոփել հետևյալ կետերում:

- *ԿՄՊ-ի վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթի ընդունում*. որպես առաջին քայլ, սա անհրաժեշտ է, որպեսզի հստակ կերպով փոխանցվի բոլոր շահագրգիռ կողմերին՝ մասնավոր հատվածին, հասարակական կազմակերպություններին, սպառողներին եւ նույնիսկ կառավարության ներսում այլ կառույցների, որ պետական հատվածը ԿՄՊ-ն կարելու է համարում պետության զարգացման համար եւ իր մասնակցությունն այդ ոլորտում բարձրացնում է որակապես նոր մակարդակի:

- *ԿՄՊ-ի համար շահագրգիռ կողմերից բաղկացած խմբի ձևավորում.* Թեև գործողությունները պետք է առաջնորդվեն Էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ինչպես մանրամասնել էինք ավելի վաղ, Հայաստանում կան մի շարք դերակատարներ, որոնք արդեն աշխատում են ԿՄՊ-ի ոլորտում: Դրանք ներառում են այնպիսի միջազգային եւ հասարակական կազմակերպություններ, ինչպիսին է ԿՄՊ աշխատանքային խումբը (տե՛ս «ԿՄՊ-ն Հայաստանում» բաժինը): Ի հավելումն, Հայաստանի առևտրային պալատն իր հետաքրքրությունն է արտահայտել Հայաստանում ԿՄՊ-ի զարգացմանը ներգրավվելու առումով, իսկ այնպիսի կրթական հաստատություն, ինչպիսին Հայաստանի ամերիկյան համալսարանն է, նույնպես որոշակի փորձառություն ունի այդ ոլորտում: Որոշ բիզնեսներ նույնպես կարող են մասնակցություն ունենալու ցանկություն ունենալ: Շահագրգիռ կողմերի այս խմբի ներսում համագործակցությունը Էկոնոմիկայի նախարարությանը թույլ կտա ներգրավել ԿՄՊ-ի ոլորտում առկա լավագույն փորձագիտական կարողությունները:
- *ԿՄՊ-ի վերաբերյալ հիմնական տեղեկատվական փաթեթի մշակում.* սա թերևս գործողությունների այս ծրագրի ամենակարևոր փուլն է, որտեղ Էկոնոմիկայի նախարարությունն աշխատում է ԿՄՊ-ի համար շահագրգիռ կողմերից բաղկացած խմբի հետ՝ ԿՄՊ-ի առաջխաղացմանն ուղղված նյութերի փաթեթ մշակելու համար: Այդ փաթեթը պետք է ներառի ԿՄՊ-ի հիմնական հասկացությունը եւ մի շարք գործնական օրինակներ, թե ինչն է հանդիսանում ԿՄՊ եւ որն է պարզապես կորպորատիվ նվիրատվությունը: ՄՄԿ-ի Գլոբալ պայմանագիր նախաձեռնությունը համալսարանների համար դասագիրք է մշակել ԿՄՊ-ի վերաբերյալ, որը կարող է լավ մեկնակետ լինել նյութերի փաթեթի համար: Նյութերի փաթեթը պետք է հասանելի լինի առցանց, ինչպես նաեւ տպագիր տարբերակով, քանի որ հայաստանի բնակչության փոքր տոկոսն է կանոնավոր կերպով օգտվում համացանցից: Փաթեթը բիզնեսներին կարելի է հասանելի դարձնել շահագրգիռ կողմերից բաղկացած խմբի համապատասխան անդամների միջոցով, ինչպիսիք են Հայաստանի առևտրային պալատը եւ Ամերիկայի առևտրային պալատը կամ Էկոնոմիկայի նախարարության այլ խողովակներով: Տեղեկատվական փաթեթը կարող է նաեւ ներկայացնել եւ պարզաբանել Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ՄՄԿ) [ISO] ստանդարտները եւ դրանց կիրառելիությունը Հայաստանում գործող բիզնեսների նկատմամբ: Որպես միջազգայնորեն մշակված եւ ընդունված ստանդարտներ, դրանք մեծ արժեք ունեն հայաստանյան այն բիզնեսների համար, որոնք ցանկանում են ներքին, ինչպես նաեւ արտաքին շուկաների ու ներդրողների աչքերում ներկայանալի երեւալ: Հայաստանի կառավարությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այս ոլորտում՝ ընկերություններին ՄՄԿ ստանդարտների վերաբերյալ կրթելով եւ այդ ստանդարտների ընդունումը խրախուսելով:
- *Կառավարության կրթում.* Էկոնոմիկայի նախարարությունը պետք է առաջնորդող դեր ստանձնի ԿՄՊ-ի հայեցակարգի վերաբերյալ իր սեփական աշխատակզմին եւ համապատասխան այլ նախարարություններին տեղեկացնելու եւ կրթելու գործում: Մշակված տեղեկատվական փաթեթը կարող է համալրվել ԿՄՊ-ի վերաբերյալ հավելյալ նյութով, որը ներկայացված կլինի պետական հատվածի տեսանկյունից.

կարող են կազմակերպվել վերապատրաստման ծրագրեր՝ փորձագետների միջոցով, որոնց կտրամադրեն շահագրգիռ կողմերից բաղկացած խմբի այլ անդամներ, ինչպիսին է ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիրը:

- *ԿՄՊ-ի վերաբերյալ առաջին ազգային համաժողով.* ԿՄՊ-ի վերաբերյալ առաջին ազգային գիտաժողովի կազմակերպումը գործողությունների ծրագրի կարևոր քայլերից է, թե՛ բովանդակության պատճառով, որն այն կտրամադրի ընկերություններին եւ կազմակերպություններին ԿՄՊ-ի վերաբերյալ կրթելու համար, թե՛ հստակ հաղորդագրություն փոխանցելու համար, որ Հայաստանի կառավարությունը շահագրգռված է ԿՄՊ-ի լայնատարած առաջխաղացման հարցում՝ որպես Հայաստանի կայուն զարգացման ապահովման մաս: Համաժողովը մասնակից ընկերություններին եւ կազմակերպություններին թույլ կտա հայեցակարգի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ստանալ, ինչպես նաեւ հարցեր տալ եւ պարզաբանումներ ստանալ այդ ոլորտի տեղական եւ միջազգային փորձագետներից:
- *ԿՄՊ-ի ներդրումը որպես չափանիշ պետական գնումների համար.* այս քայլը նույնպես ուղղված է, սկզբնական շրջանում, կառավարության համար ԿՄՊ-ի կարևորությունն ի ցույց դնելուն: Այն պայմաններում, երբ ընկերությունները հստակ պատկերացում չունեն, թե դա ինչ է, արդարացի չի լինի ԿՄՊ-ի վերաբերյալ հաշվետվություններ ակնկալել նրանցից՝ որպես պետական մրցույթներին մասնակցության հայտերի մաս: Սակայն այդ չափանիշի ի հայտ գալը կարող է ամրապնդել այս նոր գաղափարի կարևորությունը եւ բիզնեսներին հավելյալ խթան տալ ԿՄՊ-ն հասկանալու եւ ԿՄՊ ռազմավարություն մշակելու եւ իրականացնելու առաջին քայլերը ձեռնարկելու համար:
- *Լրատվամիջոցների ներգրավում.* գործողությունների այս ծրագրի ողջ ընթացքում անհրաժեշտ է ապահովել լրատվամիջոցների ներգրավվածությունը եւ նրանց միջոցով հաղորդագրությունների տարածումը լայն հանրությանը: Հանրային հեռուստատեսությամբ եւ ռադիոյով հեռարձակվող հատուկ ծրագրերը կամ այլ լրատվամիջոցների եթերում այս թեմայի վերաբերյալ քննարկումների խրախուսումը կհանգեցնի նրան, որ հանրությունն ավելի հստակ պատկերացում կունենա, թե որն է ԿՄՊ-ի իմաստը եւ թե ինչու պետք է սպառողներն ընտրեն այն ընկերությունների ապրանքները եւ ծառայությունները, որոնք ավելի լավ կորպորատիվ քաղաքացիներ են հանդիսանում: Հանրության շրջանում ԿՄՊ-ի վերաբերյալ աճող գիտելիքներն այս ոլորտում ավելի ակտիվ լինելու առումով հավելյալ խթան կհանդիսանան ընկերությունների համար:
- *Ուսումնասիրություն եւ պլանավորում.* անհրաժեշտ է խելամիտ ժամանակացույց մշակել վերը նշված կետերի իրականացման համար, որից հետո անհրաժեշտ է իրականացնել իրավիճակի ընդհանուր ուսումնասիրություն: Ուսումնասիրությունը կարող է ընդունել հետազոտության ձև, որը կներառի ընդհանուր բնակչության հարցում ԿՄՊ-ի վերաբերյալ նրանց գիտելիքների վերաբերյալ, ինչպես նաեւ կընդգրկի որակական հետազոտության բաղադրիչ մասնավոր հատվածի առումով՝ ընդգծելով նրանց կարիքներն ու ընկալումները: Այդ ուսումնասիրությունը Էկոնոմիկայի նախարարությանը թույլ կտա մշակել եւ ընդլայնել գործողությունների

ծրագիրը (եթե նախնական քայլերը հաջողությամբ պսակված լինեն)՝ ԿՄՊ-ի վերաբերյալ հաշվետվականության, միջազգային ստանդարտների եւ էկոլոգիական պիտակավորման [eco-labeling] հավանական ներդրմամբ, կամ այն կհանգեցնի իրազեկության բարձրացմանն ավելի երկար ժամակահատվածի ընթացքում (եթե նախնական քայլերը ցանկալի արդյունքը չտան)՝ օգտագործելով այլ միջոցներ:

Արտահանման վրա հիմնված տնտեսությունը պետք է կարողանա մրցունակ մնալ, տիրապետել ամենաթարմ տեղեկություններին եւ համապատասխանել նորագույն պահանջներին: Ավելի ու ավելի մեծ թվով երկրներ են սկսում ըմբռնել ԿՄՊ-ի կարեւորությունը եւ միջոցներ են կիրառում, որոնք արտասահմանյան ընկերություններից կորպորատիվ պատասխանատվություն են պահանջում: Եթե հստակ պատկերացում կազմվի ԿՄՊ-ի վերաբերյալ եւ տեղի ընկերությունները սկսեն ակտիվորեն զարգացնել իրենց գորխառնությունների այդ հատվածը, հայաստանյան բիզնեսները կշահեն՝ ավելի մրցունակ դառնալով միջազգային շուկայում:

Հայաստանի կառավարության ակտիվ ներգրավումը ԿՄՊ-ի առաջխաղացման գործում Հայաստանին թույլ կտա 21-րդ դարի մարտահրավերները դիմավորել ուժեղ տնտեսությամբ, որը կայուն [sustainable] է եւ պատասխանատու:

### Հավելված 1. 26 երկրներում կառավարության ներգրավվածության եւ ԿՄՊ իրավիճակի ամփոփագիր

Երկիրը	Պետական կամ այլ կառույց(ներ)	ԿՄՊ-ին առնչվող մանրամասներ
Ավստրիա	<ul style="list-style-type: none"> <li>Դաշնային բնապահպանական գործակալություն</li> <li>Կայուն զարգացման ավստրական գործարար խորհուրդ (RespACT)</li> <li>Ավստրիայի սպառողների միություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>«Ընկերությունների մասին» օրենքը [Companies Act] (1966) ընդգծեց, որ կարելու է, որ ընկերությունները գործեն ոչ միայն փայտերերի համար շահույթ ստանալու նպատակով, այլև հանուն «հանրային շահի»</li> <li>Ներկայում մշակվում է ԿՄՊ քաղաքականություն պետական գնումների համար</li> <li>RespACT խորհուրդը 2003 թվականին պատրաստեց «ԿՄՊ ուղենիշային տեսլականը», որն առաջարկում է (սակայն չի պահանջում) պարբերաբար ներկայացնել ԿՄՊ հաշվետվություններ</li> <li>Դաշնային կառավարությունը 2002 թվականին ընդունեց Հարակայանության ռազմավարություն, որի մեջ ներառված են ԿՄՊ բազմաթիվ բաղադրիչներ</li> <li>Ավստրիական «Էկոլոգիական պիտակ» [eco-label], որը տրվում է Ավստրիայի սպառողների միության կողմից</li> </ul>
Բելգիա	<ul style="list-style-type: none"> <li>Վալոնիայի էկոնոմիկայի նախարարություն</li> <li>Կայուն զարգացման պետական պլանավորման դաշնային ծառայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Կառավարությունը 2006 դեկտեմբերին ընդունել է ԿՄՊ գործողությունների դաշնային պլան: Պլանն ընդգրկում է առաջարկություններ՝ ուղղված թափանցիկության, էթիկական ներդրումների բարելավմանը եւ հանրության համար հասանելի տեղեկությունների հոսքի մեծացմանը</li> <li>Կայուն զարգացման եւ ԿՄՊ թեմայով կառավարական ընդգրկում վերկայքեր</li> </ul>
Բուլղարիա	<ul style="list-style-type: none"> <li>Աշխատանքի եւ սոցիալական քաղաքականության նախարարություն</li> <li>Բնապահպանության եւ ջրի նախարարություն</li> <li>Գյուղատնտեսության եւ անտառտնտեսության նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Բացի Աշխատանքային օրենսգրքից, կառավարության կողմից ընդունված կարելու փաստաթղթերից են «Խտրականությունից պաշտպանության մասին» Բուլղարիայի օրենքը եւ «Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման մասին» Բուլղարիայի օրենքը</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>Պետական կառավարման նախարարություն</li> </ul>	
Խորվաթիա	<ul style="list-style-type: none"> <li>Միջազգային տնտեսական համագործակցության տնօրինություն</li> <li>Էկոնոմիկայի, աշխատանքի եւ ձեռնարկատիրության նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>ԿՄՊ-ն հիշատակված է Ռազմավարական զարգացման 2006-2013 թ.թ. ազգային ծրագրում</li> <li>Վերջերս հաստատվել է Կայուն զարգացման ազգային ռազմավարությունը</li> </ul>
Կիպրոս	<ul style="list-style-type: none"> <li>Առևտրի, արդյունաբերության եւ տուրիզմի նախարարություն</li> <li>Շրջակա միջավայրի պաշտպանության, գործակալություն, Բնական ռեսուրսների, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պաշտպանության նախարարություն</li> <li>Կիպրոսի էներգիայի ինստիտուտ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Առևտրի, արդյունաբերության եւ տուրիզմի նախարարության շրջանակներում ստեղծվել է Հիմնադրամի կառավարման հատուկ կոմիտե, որը դրամաշնորհներ է տրամադրում մասնավոր ձեռնարկություններին՝ էներգախնայող ներդրումներ կատարելու համար, օրինակ՝ վերականգնվող էներգիայի օգտագործման</li> <li>Շրջակա միջավայրի պաշտպանության, գործակալությունում աշխատում են խորհրդատուներ, ովքեր ընկերություններին տրամադրում են խորհուրդներ՝ շրջակա միջավայրի վրա իրենց ունեցած բացասական ազդեցությունը նվազեցնելու վերաբերյալ</li> <li>Մասնավոր ընկերությունները ստացել են եվրոպական «Էկոլոգիական պիտակ»</li> </ul>
Չեխիայի Հանրապետություն	<ul style="list-style-type: none"> <li>Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն</li> <li>Արդյունաբերության եւ առևտրի նախարարություն</li> <li>Բնապահպանության նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>2013 թվականի համար երկրի ռազմավարական նպատակներն են՝ ստեղծել խոշոր կազմակերպությունների՝ ԿՄՊ-ի առաջնորդմանն ուղղված գործունեության համակարգման համար հիմնական նախապայմաններ, համագործակցություն ԿՄՊ-ի վերաբերյալ մասնագիտական գործունեություն իրականացնելու շուրջ՝ ուղղված հանրությանը, սոցիալական պատասխանատվության տերմինաբանության եւ բովանդակության շոխրջ քննարկումներ անցկացնելու ֆորումի ստեղծում</li> </ul>
Դանիա	<ul style="list-style-type: none"> <li>ԿՄՊ հարցերով Դանիայի կառավարությանն առընթեր կենտրոն, Դանիայի էկոնոմիկայի եւ ձեռներեցության հարցերի նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Կառավարությունը առաջարկում է ընդունել ՄԱԿ-ի Պատասխանատու ներդրումների սկզբունքները եւ ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի սկզբունքները</li> <li>Կառավարությունը ԿՄՊ-ի թեմայով պատրաստել է մի համապարփակ ուղեցույց ընկերությունների եւ վերկայքերի համար</li> <li>Գոյություն ունեն ԿՄՊ ազգային եւ տարածաշրջանային ցանցեր</li> </ul>

Էստոնիա	<ul style="list-style-type: none"> <li>Կայուն զարգացման կոմիտե, որը կառավարությանը խորհրդատվություն է տրամադրում կայուն զարգացման հարցերով</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Այս երկիրն ընդունել է մի ծրագիր, որը կոչվում է «Հարակայուն Էստոնիա 21», որը հիմք է ծառայում Էստոնիայի՝ մինչև 2030 թվականը հարակայուն զարգացման ռազմավարության համար եւ ներառում է գործողություններ՝ ուղղված բնապահպանական հավասարակշռության պահպանմամբ, համախմբված հասարակությամբ տնտեսական աճին</li> </ul>
Ֆինլանդիա	<ul style="list-style-type: none"> <li>Զբաղվածության եւ էկոնոմիկայի նախարարություն</li> <li>«Ֆինլանդիայի բիզնես եւ հասարակություն» (գործարարների ցանց)</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Լայնորեն ընդունվել են ISO 9000 եւ 14000 ստանդարտների շարքերը</li> <li>Զբաղվածության եւ էկոնոմիկայի նախարարությունը ԿՄՊ-ի թեմայով վերկայք է ստեղծել</li> <li>Գոյություն ունի հավաստագրման համապետական մարմին, որը զբաղվում է ձեռնարկությունների հավաստագրմամբ</li> </ul>
Ֆրանսիա	<ul style="list-style-type: none"> <li>Էկոլոգիայի, էներգետիկայի, կայուն զարգացման եւ ծովային հարցերի նախարարություն</li> <li>«ԿՄՊ-ի փորձադիտարան» (գործարարների ցանց)</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>«<i>Sinsekական նոր կանոնների մասին</i>» [<i>Nouvelle Regulations Economiques</i>] օրենքը, որն ընդունվել է 2001 թվականին, օգնել է խրախուսել ոչ ֆինանսական հաշվետվությունների կազմումը</li> <li>2007 թվականին կառավարությունը հաստատեց Հարակայուն պետական գնումների գործողությունների ազգային ծրագիրը</li> <li>Գործում է ֆրանսիական ստանդարտիզացման մարմին, որն զբաղվում է ձեռնարկությունների հավաստագրմամբ</li> <li>Սոցիալապես պատասխանատու ներդրումների շուկան նշանակալի աճ է գրանցել</li> <li>Ֆրանսիան ընդունել է Հարակայուն զարգացման ազգային ռազմավարությունը 2009-2013 թ.թ. համար</li> </ul>
Գերմանիա	<ul style="list-style-type: none"> <li>Զբաղվածության եւ սոցիալական հարցերի նախարարություն</li> <li>Հարակայունության հարցով գերմանական խորհուրդ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>2002 թվականին Գերմանիան հաստատել է Ազգային հարակայունության առաջին ռազմավարությունը</li> <li>Կառավարությունը պատրաստել է հարակայունության վերաբերյալ ընկերությունների հաշվետվություններ ներկայացնելու առաջարկություններ</li> <li>Առևտրի եւ արդյունաբերության պալատները գործարարների տրամադրում են խորհրդատվություն եւ խորհուրդներ</li> </ul>
Հունաստան	<ul style="list-style-type: none"> <li>ԿՄՊ հարցերով հունական ցանց [Hellenic Network for CSR] (գործարար ցանց)</li> <li>Հունաստանի ձեռնարկությունների եւ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Շրջակա միջավայրի պաշտպանության նախարարությունը կենսագործել է այլընտրանքային էներգիային եւ ջրերի աղբյուրների պաշտպանությանը վերաբերող ծրագրեր</li> </ul>

	<p>արդյունաբերության ճյուղերի դաշնության Կայուն զարգացման վարչություն</p> <ul style="list-style-type: none"> <li>• Էկոնոմիկայի նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Էկոնոմիկայի նախարարության կողմից որևէ հատուկ քայլ չի կատարվել</li> </ul>
Հունգարիա	<ul style="list-style-type: none"> <li>• ԿՄՊ տնօրեն, Էկոնոմիկային եւ տրանսպորտի նախարարություն</li> <li>• Հունգարական PR ասոցիացիա</li> <li>• Էկոլոգիական պիտակավորման հունգարական կազմակերպություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• 2006 թվականին Կառավարությունը որոշեց օգտագործել Եվրամիության ուղենիշները՝ ԿՄՊ-ի նկատմամբ ուշադրությունը սեւեռելու նպատակով</li> <li>• Էկո-պիտակավորումը կատարվում է Շրջակա միջավայրի եւ ջրերի հարցերով նախարարության վերահսկողությամբ</li> <li>• Հարակայուն զարգացման ազգային ռազմավարությունը վերաբերում է մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածին</li> </ul>
Իռլանդիա	<ul style="list-style-type: none"> <li>• Զեռնարկատիրության, առևտրի եւ զբաղվածության վարչություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• 2008 թվականին ընդունված «Վարկային հաստատությունների մասին» օրենքը պահանջում է, որ Կառավարության աջակցությունն ստացած ֆինանսական կառույցները ներկայացնեն ԿՄՊ հաշվետվություններ</li> <li>• 2007-2012 թվականների համար ընդունվել է Կլիմայի փոփոխության վերաբերյալ գործողությունների ազգային պլան</li> <li>• 2000 թվականին Կառավարությունը ստեղծել է Պետական տեղեկատվությանը եւ ծառայություններին բիզնեսի հասանելիություն [Business Access to State Information and Services (BASIS)] վեբկայքը, որը պարունակում է որոշակի տեղեկություններ ԿՄՊ-ի մասին</li> </ul>
Իտալիա	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն</li> <li>• Շրջակա միջավայրի եւ շրջակա միջավայրի պաշտպանության նախարարություն</li> <li>• Արդյունաբերության եւ առևտրի նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Հիմնվել են ԿՄՊ հարցերով Իտալիայի բազմաշահառու ֆորում եւ Իտալիայի ԿՄՊ կենտրոն (I-CSR)՝ որպես Կառավարության երկու առանցքային բազմաձևառու նախաձեռնություններ</li> <li>• Տրվում են ԿՄՊ մրցանակներ, անց են կացվում հաղորդակցական քարոզարշավներ</li> <li>• Ներդրվել է պետական գնումների «կանաչ» համակարգ</li> </ul>
Լատվիա	<ul style="list-style-type: none"> <li>• Բարեկեցության նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Նախարարության վեբկայքը պարունակում է ԿՄՊ-ին նվիրված բաժին</li> <li>• ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիրը ստացել է կառավարության կողմից ճանաչում եւ աջակցություն</li> </ul>
Լիտվա	<ul style="list-style-type: none"> <li>• Սոցիալական ապահովության եւ աշխատանքի նախարարություն (MSSL)</li> <li>• Շրջակա միջավայրի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն,</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Մշակվել է «Զեռնարկությունների սոցիալական նախաձեռնությունների մասին» օրենքի նախագիծ</li> <li>• Կառավարությունը մանրամասն տեղեկություններ է տրամադրում էկոլոգիական պիտակների, շրջակա միջավայրի կառավարման</li> </ul>

	<p>Սոցիալական ապահովության եւ աշխատանքի նախարարության ղեկավարությամբ գործող ԿՄՊ համակարգման միջգերատեսչական հանձնաժողով</p> <ul style="list-style-type: none"> <li>Կայուն զարգացման ազգային հանձնաժողով</li> </ul>	<p>համակարգերի, առողջապահական եւ անվտանգության ստանդարտների վերաբերյալ</p> <ul style="list-style-type: none"> <li>Պատրաստվել է ԿՄՊ զարգացմանն ուղղված ծրագրի նախագիծ (2009-2013)</li> <li>2006-2008 թ.թ. ԿՄՊ առաջնորդման ծրագրի հիման վրա, Կառավարությունը տպագրել է ձեռնարկներ եւ անց է կացրել ԿՄՊ թեմայով ուսուցման ծրագրեր, ստեղծել է վեբկայք եւ կազմակերպել համաժողովներ</li> </ul>
Նիդեռլանդներ	<ul style="list-style-type: none"> <li>Տնտեսական հարցերի նախարարություն</li> <li>Գյուղատնտեսության, բնության եւ սննդի որակի նախարարություն</li> <li>Արտաքին գործերի նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Կառավարությունը վերկայքում առանձին բաժին ունի՝ նվիրված ԿՄՊ-ին</li> <li>Կառավարությունն աջակցում է այլ կազմակերպությունների՝ «ԿՄՊ Նիդեռլանդներ», Առեւտրային պալատներ</li> <li>ԿՄՊ-ն արտասահմանում առեւտրային առաքելությունների բաղադրիչ մասն է</li> <li>Ակտիվ ԿՄՊ իրականացնող ընկերությունների նկատմամբ իրականացվում է արտոնություններ նախատեսող քաղաքականություն</li> </ul>
Նորվեգիա	<ul style="list-style-type: none"> <li>Արտաքին գործերի նախարարություն</li> <li>Շրջակա միջավայրի նախարարություն</li> <li>Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն</li> <li>Առեւտրի եւ արդյունաբերության նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>2007 թվականին Արտաքին գործերի նախարարությունը հյուրընկալել է ԿՄՊ թեմայով մի համաժողով, հրատարակել հեղինակային փաստաթուղթ եւ ԿՄՊ-ն դնում է աշխարհում Նորվեգիայի գործարար ներկայության համատեքստում</li> <li>Շրջակա միջավայրի նախարարությունը ստացել է ISO 14001 հավաստագիր</li> <li>Այլ երկրներում աշխատող ընկերությունները աջակցություն են ստանում եւ մշտադիտարկվում Արտաքին գործերի նախարարության կողմից</li> <li>Արտաքին գործերի նախարարության կողմից աջակցություն ՄՄԿ-ի Գլոբալ պայմանագրին</li> </ul>

Լեհաստան	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքի եւ սոցիալական քաղաքականության նախարարություն</li> <li>• Էկոնոմիկայի նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• 2006 թվականին Աշխատանքի եւ սոցիալական քաղաքականության նախարարությունը հիմնել է ԿՍՊ հարցերով բազմաճյուղ աշխատանքային խումբ</li> <li>• Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ Կառավարությունը պատրաստել է ԿՍՊ-ի իրականացման ուղեցույց</li> </ul>
Պորտուգալիա	<ul style="list-style-type: none"> <li>• Որակի պորտուգալական ինստիտուտ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Որակի պորտուգալական ինստիտուտը ստեղծել է «NP 4469»՝ Սոցիալական պատասխանատվության</li> </ul>
Ռումինիա	<ul style="list-style-type: none"> <li>• Սոցիալական պատասխանատվության տնօրինություն (Աշխատանքի, ընտանիքի եւ սոցիալական պաշտպանության նախարարության կառուցվածքում)</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Նոր ձեւավորված տնօրինությունը պատասխանատու է ԿՍՊ-ի ոլորտում կառավարության քաղաքականության համար, բայց որեւէ կոնկրետ գործողություն չի իրականացվել</li> </ul>
Սլովակիա	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքի, սոցիալական եւ ընտանիքի հարցերի նախարարություն (MLSAF)</li> <li>• Շրջակա միջավայրի պաշտպանության նախարարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• MLSAF-ը հիմնել է «Ընտանիքի բարեկամ գործատու» մրցանակ</li> <li>• Շրջակա միջավայրի պաշտպանության նախարարությունը շնորհում է էկո-պիտակներ եւ աջակցում է ISO հավաստագրման գործընթացներին</li> </ul>
Իսպանիա	<ul style="list-style-type: none"> <li>• Կորպորատիվ պատասխանատվության ազգային խորհուրդ (NCCR)</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• NCCR-ն ստեղծվել է 2008 թվականին՝ հետեյալ առաջնահերթ ոլորտներով. բազմազանության կառավարում, սոցիալական համախմբում, մասնակցություն արտադրողական տնտեսությանը, թափանցիկություն եւ հաղորդակցություն, սոցիալապես պատասխանատու ներդրումներ եւ ԿՍՊ-ի ինտեգրում կրթության մեջ</li> <li>• Գոյություն ունի օրենսդրություն պատասխանատու պետական գնումների մասին</li> </ul>

Թուրքիա	<ul style="list-style-type: none"> <li>• Առևտրի եւ արդյունաբերության նախարարություն</li> <li>• Շրջակա միջավայրի պաշտպանության եւ անտառտնտեսության նախարարություն</li> <li>• Աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարություն</li> <li>• Կապիտալի շուկաների հարցով խորհուրդ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական գնումների մասին օրենքն ընդունվել է 2002 թվականին</li> <li>• Վերականգնվող էներգիայի մասին օրենքն ընդունվել է 2005 թվականին</li> <li>• Հարկերից ազատվելու՝ հաստատված խթանները օգնում են կորպորացիաների կողմից պետական կրթական համակարգերի օժանդակությանը հասնելուն</li> </ul>
Միացյալ Թագավորություն	<ul style="list-style-type: none"> <li>• Գործարարության, նորարարության եւ հմտությունների զարգացման վարչություն (նախորդ Կառավարության կազմում կար Կորպորատիվ պատասխանատվության նախարար)</li> <li>• Շրջակա միջավայրի, սննդի եւ գյուղական հարցերի վարչություն (DEFRA)</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• 2007 թվականին ընդունվել է Հարակայուն գնումների գործողությունների ծրագիր</li> <li>• ISO 14001 ստանդարտը ներդրվել է, իսկ ISO 26000 շարքը կներդրվի 2010 թվականին</li> <li>• Գոյություն ունի ԿՍՊ մրցանակների համակարգ</li> <li>• 2005 թվականին հրապարակվել է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հարցերով միջազգային ռազմավարական ծրագիր</li> </ul>

**Հավելված 1-ի աղբյուրները.**

- *ԵՄ-ին նոր անդամակցած պետություններում եւ անդամության թեկնածու երկրներում ԿՍՊ պրակտիկայի առումով իրավիճակի հետազոտություն [Baseline Study On CSR Practices In The New EU Member States And Candidate Countries], ՄԱԶԾ եւ Եվրամիություն [UNDP and European Union], 2007 թ. հունիս*
- *«Կորպորատիվ քաղաքականության հարցում կառավարության փոփոխվող դերը» [The Changing Role of Government in Corporate Responsibility], Բաքլենդ, Տենկատի եւ Միդտան [Buckland, Tencati and Midttun], 2006 թվական*
- *«Եվրոպայում ԿՍՊ-ի ուղեցույց» [A Guide to CSR in Europe], ԿՍՊ Եվրոպա [CSR Europe], 2009 թվական*
- *Թուրքիայում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրավիճակի մասին զեկույց [Turkey Corporate Social Responsibility Baseline Report], ՄԱԶԾ, ԿՍՊ սասցիացիա, Եվրոպական հանձնաժողով [UNDP, CSR Association, European Commission], 2008 թվական*
- *«Զարգացնելով հարակայունությունը, Եվրոպական հանձնաժողով. Երկրների համար Եվրոպական քո վերկայքերը» [Taking Sustainability Further, European Commission: Your Europe websites for countries], ([http://ec.europa.eu/youreurope/business/doing-business-responsibly/taking-sustainability-further/index\\_en.htm](http://ec.europa.eu/youreurope/business/doing-business-responsibly/taking-sustainability-further/index_en.htm)) առկա էր 2010 թվականի մայիսի 30-ի դրությամբ:*

## Հավելված 2. ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի 10 սկզբունքները

### *Մարդու իրավունքներ*

Սկզբունք 1. Գործարար հատվածը պետք է աջակցի եւ հարգի միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների պաշտպանությունը եւ

Սկզբունք 2. պետք է զերծ լինի մարդու իրավունքների խախտումներից հանցակցությունից:

### *Աշխատանքային հարաբերություններ*

Սկզբունք 3. Գործարար հատվածը պետք է պաշտպանի միավորումներ կազմելու ազատությունը եւ կոլեկտիվ սակարկությունների իրավունքի արդյունավետ ճանաչումը,

Սկզբունք 4. պետք է աջակցի հարկադիր եւ ստիպողական աշխատանքի բոլոր ձևերի վերացմանը,

Սկզբունք 5. պետք է սատարի մանկական աշխատուժի արդյունավետ վերացմանը եւ

Սկզբունք 6. պետք է աջակցի զբաղվածության եւ մասնագիտական խտրականության վերացմանը:

### *Շրջակա միջավայր*

Սկզբունք 7. Գործարար հատվածը պետք է աջակցի շրջակա միջավայրի մարտահրավերների նկատմամբ զգուշավոր մոտեցմանը,

Սկզբունք 8. պիտի հանդես բերի նախաձեռնություններ՝ ուղղված շրջակա միջավայրի նկատմամբ առավել մեծ պատասխանատվության խթանմանը,

Սկզբունք 9. պիտի խրախուսի շրջակա միջավայրի համար անվնաս տեխնոլոգիաների մշակումը եւ տարածումը:

### *Կոռուպցիայի դեմ պայքար*

Սկզբունք 10. Գործարար հատվածը պետք է աշխատի ընդդեմ կոռուպցիայի բոլոր ձևերի, ներառյալ՝ շորթումը եւ կաշառակերությունը: